



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6031/1

Գրառման

Կիցուղայութեալ Տպարք

անձակաց

Տպարք Պ

9148 9251

2h - 83

1907

No 53

«ՅԱՌԱՋ»-Ի ԿՐԱԴՐԱՆՆ»

24 JAN 2006
15 NOV 2011

12775

九五

91

ՅԻՇԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՕՏԻԿ ԱՆԳԵԱԼԻՑ

9.հիմք և 10 կույ.

Առաջին պրոլե^տ (Ա. Ա Կ Ե Ր Ա Ն)

۲۰۶

ТИФЛИСЪ

издание „ГЕРМЕСЪ“ С. П. Елигарова
Успехъ. физ. № 5. 1907

(18)

16 APR 2014

6031/1

№ 53

«ՅԱՌԱՋԱՀ ՊՐԱԴԱՐԱՆ»

№ 53

9(47.925)
Ա-83

ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՊ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1005
22278

Գիր և 10 կոմ.

ՄՈՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ

(ԱՍԿԵՐԱՆ)

Առաջին պրակ

12775

1907
Թ.Ի.Ց.Լ.Ի.Ս

ՅԻՇԱՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՈՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ

ՊՐԱԿ 1.

Ա Ս Կ Ե Բ Ա Ն

Խաչէնի ու Վարանդայի կոհակաւոր լեռ ու բլուրները հետքհետէ ցածրանալով՝ եկել, Կարկառ գետի աջ ու ձախ ափերում իրանց յանսգման ծայրերն են խթել, որոնց պատւանդանները լիզելով Կարկառն է հոսում երբեմն անձրևներից ու ձնահալոցից գոյացած հեղեղատներով լիահուն, երբեմն էլ՝ ամարային օրերում հաղիւ մինչեւ սրունքները հասնող ջրերով։ Նրա ափերի երկու կողմին վերջաւորուղ բլուրների շարունակութիւնն են կազմում Ասկերանի երբեմն հապար, այժմ ատամնաթափ մարտկոցները, որ բնական բարձրութիւններին արհեստականօրէն միացած՝ գետի համար միայն մի անցք են թողել 350—400 քայլ տարածութեամբ։

Դարաբաղի ինքնապաշտպանութեան գործում, մանաւանդ Վարանդայի, Խաչէնի ու մասնաւորապէս Շուշուայ համար՝ Ասկերանը նշանաւոր գեր է խաղացել. նա մի կտտարեալ Սախկալթութամն է եղել թուրք հրոսակախմբերի համար հայ-թրքական ընդհարումների սկզբից մինչև վերջը։ Դաշնակցութեան փորձուած ուազմիկներն ինքնապաշտպանութեան գործի ծանրութիւնն իրանց վրա տեսնելուց յետոյ, մեծ ուշագրութիւն դարձրին այդ կէտի վրայ։ Փանահ-խանի ձեսակերտը խոշոր ծառայութիւն մատուցեց հայերին. միշտ յիրձակումների ենթակայ, բայց միշտ յաղթական՝ Գանլը-Ասկերան անունն ստացաւ թուրքերից։

Բագու-Բալախանեան գէպեկերից յետոյ Դարաբաղը թէկ խաղութիւն պահպանեց բաւական երկար ժամանակ, սակայն այդ խաղաղութիւնը կատարելապէս մակերեսոյթային էր. Բագուին անմիջապէս արձագանք տուող նախիջեանը, երեանը ու Մինքենդը զրութիւնն աւելի սպանական, արհաւրալից դարձրին, և Դարաբաղի թուրքերը, գքբախտարար չկարողացան խեղգել իրանց մէջ արթնացած արիւն թափելու տեսչն ու տարուելով զանազան էմիսարների ու գրգռիչների քարոզներով, մղձաւանջն աւելի ու աւելի խեղգիչ դարձրին։ Ճանապարհորդ հայերը եւլախից մինչև

22278+



Շուշի ամեն տեսակ սոսրացուցիչ վիրաւորանքների էին և նթարկւում. սրանց ինքնասիրութիւնը հայիոյւում, ծաղրւում էր այս կամ այն եղանակով և այդ շարունակ 5—6 ամսւայ ընթացքում, երբ Դարարագում գեռ «հաշտութիւն» էր: Թէ թուրքերը որքան էին անձնատուր եղել պրօվակացիային, թէ որքան նրանք անտրամադիր էին գէպի խաղաղութիւնը, գրան ապացոյց կարող է լինել այն գէպը, երբ նրանք Ազգամ ժամանած խաղաղարար հոգիորականների ու պատւաւոր մարգկանց կոչերը լսելուց յետոյ՝ հայ քահանայի մէջքին ձու զարկեցին: Մինչև անզամ գտուեցին թեթեամիտ, մնապարծ թուրքեր, որ հրավարակով ասում էին Ազգամում:— մերոնք էլ փոքրիկ եապոն դարձան Բագւում:

Բոլոր նշանները պարզ ցոյց էին տալիս, որ հայ-թրքական ընդհարումները Դարարագում ևս հնարաւոր են գառնալու, քանի որ շահագրգուռած կողմերի մէջ անվստահութիւնը զնալով-զնալով զարգանում է, իսկ չարիքը խեղելու համար ոչ մի միջոց ձեռք չի առնւում և տեղական իշխանութիւնը մատների արանքով է նայում բոլոր երկոյթներին, երբեմն նոյն իսկ նպաստելով վիճը լայնանալուն, զանազան գտապարտելի միջոցներով: Աւստի Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործիչների, գեկավարների ցանցով պատեց գտառները, որովհետեւ պարզում էր, որ հայի գոյութեան խընդիրն իսկապէս վտանգւած է Կովկասում: սկսուեց մի տեսնային, խելապատառ գործունէութիւն, ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար:

Օգոստոսի 8-ին լարուած դրութիւնը պայթեց և թուրքերը կառավարութեան ներկայացուցիչների աչքի առաջ՝ հայ քազմաթիւ ճանապարհորդների գերեցին Ազգամում, որոնց հետ և տեղումը ընակւող շատ արհեստաւորներ, խանութպաններ ու այնտեղէ գործարաններում աշխատող բանուորներ: Դարարազը ցընցուեց, վասովի հոտն զգացում էր և Օգոստոսի 16-ին Շուշում թնդացին հրացանները: Կէսօրուայ զէմ սուրհանդակը թուած հառաւ, տեղեկութիւններ բերելով Շուշուց: Զարկաւոր էր անպայման փակել Ասկերանը:

1905 թ. Օգոստոսի 17

Առաւոտեան երեսուն հոգուց բաղկացած մի խմբակ, Գաշնակցութեան զեկավարներից երկուսի հրամանատարութեամբ,

լոյսը գեռ չբացուած՝ բռնեց Ասկերանը: Բայց որովհետեւ այդ ոյժը շատ քիչ էր երկու կողմերն էլ բռնելու համար, ուստի նրանք ամբացան Վարանդայի կողմն ընկած մարտկոցներում, իսկ երկու սուրհանդակ ուղարկուեց Խաչէն, որպէսզի նրանք էլ շտապեն միւս կողմի մարտկոցները գրաւելու:

Լոյսը բռլորովին բացուեց: Մէյթթուի ուռիների տակ հաւաքուել էին բազմաթիւ թաւրք ձիաւորներ: Կէս ժամու չորս կողմերը հետախուզկելով, յանկարծ սրանը անկանոն սուր արշաւով թուան գէպի Ասկերան: Հայերը լուս էին, բայց հէնց որ հակառակորդները մօտեցան այնքան, որ զնդակը կարող էր համանել ինքնապաշտպանների հրացանն երը գոռացին երկար շարքով և երկու ուղղութեամբ: Թուրքերը մեխուսեցին, ապա ձիանց գլուխ ները շուռ տալով՝ յետ խաղացին:

Զանցաւ քառորդ ժամ և նրանք նորից իրանց սովորական, ովկորիչ «Ետ-Ալին» գոռալով՝ յարձակում գործեցին: Բայց տղերքը գիրքից գուրս եկած՝ զդթայածն գիրքը էին բռնել, միմեանցից հեռու-հեռու, արագ հրացանաձգութիւնը զսպեց թուրքերի աշխոյցք: սրանք յետ մղուեցին, և մօտակայ ձորակներում ձիերից իջնելով՝ քարեր գրաւեցին: Մի ժամ տես կոփւը, բայց թուրքերի մէջ մի տեսակ տարտամութիւն, անվճռականութիւնն էր նկատում: կարծես նրանք հէնց էնպէս, աննպատակ հրացան էին արձակում, ովկորուած հրացանաձգութիւնից: Մէկ էլ ձի նստեցին ու գրոհ տուին գէպի Խրամորթ ու Խանաբագ գիւղերը: երկու ժամ էլ այնտեղի կոփւը տեսեց, բայց ոչ մի արդիւնք: Թուրքերը կորուստներով յետ նահանջեցին: Հայ հրամանատարներից մէկն անցաւ Խաչէն, այնտեղից տեղեկութիւններ իմանալու, և խմբերն շտապեցնելու գէպի Ասկերան: Նա գեռ չէր վերադարձեր, որ թուրքերը ժամը 4-ին մօտերը, աւելի ստուբացած, մօտ 500 հոգի, աւելի խիզախ յարձակմաքը ըշեցին գէպի Ասկերան: Հայերը թուրքերի քաջաբար յառաջ խաղալը տեսնելով, իսկոյն գուրս վազեցին գիրքերից, մօտեցան ուղղակի խճուզուն, և գիմազգրաւեցին հակառակորդին: հէնց այդ միջոցին էլ Խաչէնու կողմից վրայ հասաւ այնտեղ անցած հրամանատարը իւր մի քանի ընկերներով՝ և թուրքերը մնացին երկու կրակի մէջ: Էլ անխոնհմութիւն էր նրանց կողմից կոփւը յարունակելը: յետ քաշուեցին բռլորովին և մինչև իրիկուն այլ ևս ոչոռք չերկաց: Հայերի ձեռ-

Քըն այդ օրը 70 ձի ընկաւ սարերից իջնող քոչուորներից:

Օգոստոսի 18.

Լոյսը նոր էր բացւում. Աղդամի, Սէյիթառուի, Մարզլուի, Շէլլուի և այլ կողմերից բազմաթիւ ձիաւորների ծայրը բացուեց. նրանք գալիս էին ու գալիս և վերջը չէր համոււմ. եկան, հաւաքուեցին Հարազաջի մօտ գտնուող Հասան-Աղի բարվանսարային կպած թրբական հանգստարանն ու մի մեծ շրջան կազմեցին. Քարող խօսող կար, թէ ինչ չիմացուեց. միայն միքանի ըուղէից յետոյ նրանց մէջ նկատուեց մեծ շարժում, ապա հազարաւոր ձիաւորները երկու մասի բաժանուելով՝ ձախ թևը թեքեց դէպի Նախիջևանիկ, իսկ աջը՝ դէպի Խանաբադ, մինչդեռ կենդրունը՝ ամենամեծ ուժը վեցցրած՝ ճակատեց դէպի կիրճը, Շուշի անցնելու:

Դրութիւնը լուրջ էր, բայց ոչ յուսահատկան. Վարանդայի մարտկոցներում դիրք էին բռնել 30-աչափ գինուորներ, Խաչէնի կողմից նոյնակէս մի տասնեակ բռնել էր վերեի պատը, իսկ այնտեղ, ճանապարհի վրայ կրացած ժայռերի վրայ պատում էին երկու խմբակներ. Մօտակայ գիւղերում գտնուում էին եւ պատրաստ օժանդակ խմբեր, որոնք, պէտք եղած գէպքում՝ կարող էին ոչ ուշ քան 15 լոպէում հասնել: Երբ թուրբերը պատերազմական որոշ տակտիկայով իրանց թևերը պարզեցին, հրամանատարները հասկացան, որ այդ օրը հանաք չի լինելու. ուստի երկու սուրեհանդակ թուցրին դէպի օժանդակ խմբերը: Ապա զեկավաներից մէկը հինգ հոգի վերցնելով՝ թուալ գէտի Նախիջևանիկ դիմող թուրքերը, և Զրմախութ կոչուող թումբը գրաւելով՝ կարողացաւ շեշտակի գնդակակոծութեամբ՝ թուրքերի առաջը փակել. բայց նրանք բաժանուելով երեք մասերի, աշխատեցին շըրջապատել կուռող հայերին. օղակը կամաց-կամաց նեղանում էր. տղերը թէկ կուռում էին յամառութեամբ, բայց բոլորը միասմի կը կոտորուէին, եթէ այդ իսկ բոպէին չհասնէր օգնական խումբը, Կեցցէ Դաշնակցութիւնը՝ մակագրութեամբ գրօշակը ծածաւով: Հարուածը կուռ էր, համարձակ. թուրքերն ընկրկեցին, և չկարողացան դիմադրել, չսայելով որ ահագին բազմութիւն էին կազմում. սկզբում նեղելով, ապա հալածելով՝ հայերը նոր բշիցին իրանց նախկին տեղը, հանգստարանը: Խաչէնցիք նոյնակէս քաջօրէն մարտնչելով՝ ձախթեւեան յարձակումն էին յետ

մզում: Յետ էր մզուել և կենդրօնը. գործը բաւական յաջող էր հայերի համար. բայց մարտկոցներում դիրք բռնած խմբի մօտ գտնուող ղեկավարներից մէկը ոգեսորուելով յաջողութիւնից ու հրոսակախմբերի փախուստից, հինգ ձիաւորով դուրս թռաւ դիրքից և փախչող թուրքերի յետեիցն ընկաւ: Թուրքերը տեսնելով իրանց հետամտող վեց հայերին, նրանցից մի հարիւր հոգի գարան մտան թթենիների տակ, աննկատ մնալով: Ոչ մի ազդանքան, ոչ մի գոռոց չօգնեց. աղերքը քշում էին, առանց մօտալուտ վտանգի մասին տեղեկութիւն ունենալու: Սարսափը աիրեց բոլորին. մինչև օգնութեան հասնելը՝ նրանք արդէն վերջացած կը լինէին: Քշում էն, բշում էն թշնամու յետեից՝ ձիանց վրայից հրացան պարպելով փախչողների թիկունքից. բայց հէնց որ հասան և գարանակալներից 30—40 քայլի վրայ էին գտնուում, յանկարծ գոռացին թուրքերի հրացանները... մէկի ձին ընկաւ. բայց տղերը չշփոթուեցին. անթիւ գնդակների տարափի տակ հետիւութըն մնացած զինուորին գաւակ առնելով՝ յետս փախան: Այդ դէպը ըլքաւականաչափ ազգեց գործի հետևանքին. թուրքերը սիրտ առնելով՝ «Եա-Ալի»-ն գոռացին, ու գլխապատառ վրայ թռան: Մարտկոցի զինուորները կարծիկով, որ հրամանատարն սպանուած և բանը բանից անցած է, քաշուեցին վերեի դիրքը. այդ հանգամանքից օգտուելով՝ թուրքերը խփեցին և նրանցից մի 30—40 հոգի թռան կիրճով դէպի Շուշի: Կարծիս եռացրած ջուր մաղուեց հայերի զլիխն... Շուշին բոցավառ՝ այրուում էր. սուրեհանդակ սուրեհանդակի յետեկից գալիս, Ասկերանի գրութեան մասին տեղեկութիւններ էր թուցնում Շուշի, իսկ այստեղ դեռ պատռում են շղթան... Մի ելէքտրական ցնցում առաջացաւ բոլոր խմբապետների ու զինուորների մարմնով և պողպատէ կազմով՝ ճակատ գրին թուրքերին. հարուածը խիստ էր, անողոք. հրամանատարներից մէկը խփեց, սեպածե մտաւ թուրքերի մէջ և նոր համնող օժանդակ թուցիկ խմբի օգնութեամբ, նրանց աջ թեր հալածեց մինչև Շէլլու. կենդրոնի հրամանատարը նոր ձեռվ սեղմեց հակառակորդներին. Խաչէնի զեկավարը ևս հերոսաբար մաքրեց ամբողջ գիծը, և թուրքերը ծածկուեցին: Զանցաւ երկու ժամ, նրանք նորից հաւաքուեցին Հարազաջ, բաժանուեցին երկու պատկառելի մասերի ու դէպի Խրամորթ արշաւեցին. բայց քաջ գիւղացիներն ու օգնութեան հասնող մարտիկները մեծ թափով հակայարձակոււմ

տուին և թշնամին զգալի կորուսաներով յետ մղուեց, կամ աւելի շուտ՝ փախաւ և Աղդամ ապաստանեց:

Ժամը 3-ի մօտերը հեռուից մի սպիտակ շորերով ձիաւոր սկսեց գդակը շարժել բարեկ եղանակով և ինչոք գոռալ. բայց ձայնը չէր հասնում: Դեկավարները զիբերից մօտ հրաւիրեցին նըրան, սակայն նա չէր վստահանում մօտենալ. երկու ձիաւորներ քշեցին Վարանդայի դիրքից և մի տասը ըոպէից յետոյ սպիտակ շորաւորին իրանց հետ վերցնելով յետ եկան. սորաժնիկ էր:

—Ի՞նչ էք ուզում, —հարցը ինքան:

—Նահանգապետը Շուշի է, —պատասխանեց նա. —Հրամայել է գաւառապետին, գաւառապետն էլ ինձ ուղարկեց ձեզ մօտ նահանգապետի կամքը յայտնելու, որ բաց թողնէր անցնելու սարերից վերադարձած և Խօջալլուից վերև իջած ըոչուորներին, իսկ զինուած ուժերի Շուշի անցնելը՝ արգելել:

—Յետ դառեք և յայտնեցէր գաւառապետին, նա էլ հազորդէ նահանգապետին, թէ Ասկերանի հայերն ասացին, որ հիմք նահանգապետը պատուիրած լինէր բոչուորներին կոտորել ու թալանել իսկ զինուած խմբերին թողնել, մենք էլի՛ հակառակը կանչինք. Նրա կարգադրութիւնն ուշացած է և կարող էր բոլորովին հանգիստ լինել, որ մենք թալանի համար չենք այստեղ նըստել. Ստրաժնիկը «Խում հմ» ասաց ու ձին նստելով հեռացաւ. մի ժամ չանցած՝ քօչի ծայրը բացուեց. ոչխարների և տաւորների հօտերով՝ լցուեցին Ասկերանն ու ճանապարհները. Էնց այդ միջոցին, որտեղից որտեղ, հալածուած թուրք ձիաւորները, մօտ 1000 հոգի, հարսա-հրոցով, աղմկելով, խստնուեցին հօտերի մէջ և սկսեցին կրակել աջ ու ձախ. Հայերն այս անգամ իսկապէս շփոթուեցին. սա մի խորամանկ միջոց չէր արդեօք, քօչի անցնելը պատրուակ բռներով, նրանցով շփոթեցնել հայերին և թուրքերին յարմարութիւն տալ Շուշի համնելու...: Մինչև հայերը կ'ուշաբերուէին, հակառակորդներից հարիւր հոգի թուան, անցան Ասկերանի կիրճով. իսկոյն հրաման տրուեց կտրել Խօջալլուի իջնող քօչի մնացորդը և կիրճը նորից փակուեց. թուրքերը վերջնականպէս յետ փախան և այդ օրն այլևս չերևացին: Զինուորներն իրանց բարկութիւնը ցանկացան լուծել քօչուորներից, բայց թոյլ չտրուեց, թէև 18 ոչխար էլի գրաւեցին:

Թուրքերն այդ օրը թողեցին մի քանի հրացան, և երեք դիակ

մնացածը բաշել, տարել էին. բաւական շատ պէտք է լինէր, մանաւանդ թրամորթի տակ. հասարակ աշխով կարելի էր լինում տեսնել շատերի ձիազլոր լինելը: Հայերի տուած կորուսաց միայն մի ձի էր:

Ասկերանցիները Շուշուց դեռ ստոյգ տեղեկութիւն չունեին կոռու լնթացքի մասին և գիտէին, որ տափարակի թուրքերը հետեւալ օրը աւելի մեծ ուժով պէտք է վրայ հասնէին, Ասկերանը խեղղելու, և Շուշուայ հայերի հարստութեան թալանին մասնակցելու. ուստի բոլոր պատահարների առաջն առնելու համար նուրանոր խմբեր կանչուեցին, զանազան հրահանգներով տեղաւորուեցան բոլոր դիրքերում, սպասելով լուսաբացին:

Օգոստոսի 19.

Խաչէնի թռուցիկ խումբը ևս հաւաքուել, բռնիլ էր Ասկերանի մարտկոցները, Խանաբարդի այգիներն ու ճանապարհն վրայ գըտնուող բլուրները: Պահակախմբերը զիշերը չհեռացան դիրքերից, վախենալով, որ մի գուցէ զինուած թուրք խմբեր անց կենան, բայց ինչպէս ցերեկը, նոյնպէս և զիշերը՝ կատարեալ մեռելութիւն էր տիրում տմբողջ ճանապարհն իրկարութեամբ, մինչեւ Ղարաղաջ: Միայն այդ օրը, ինչպէս պատահեց, մի կառք արշաւասոյր գուրս թռաւ Հասան-Աղի քարվանսարայի մօտից, Ասկերանի ուղղութեամբ: Խաչէնի կողմից մի անգամ հրացան արձակելով՝ կանգնելու նշանը տուին, բայց կառը չանսաց, առաջ էր խաղում. այն ժամանակ վեց հոգի վրայ վազեցին դիրքերից և յարձակուեցին կառքի վրայ. մէջը նստած էին մի քանի թուրքեր. Նրանք յարձակուողներին զիմաւորեցին հրացանաձգութեամբ, բայց մի քանի բողէից յետոյ ընկան ամենքն էլ զնդակահար, կառը մնաց ճանապարհն մի կողքին, իսկ ձիաները հայերը տարան:

Ժամը 10-ին մօտ Խօջալլուի կողմից դէպի մեզ իջնող մի ձիաւոր նկատուեց, որ փափախով և այլ միջոցներս աշխատում էր ցոյց տալ, թէ «ուրիշ» մարդ չէ, հրացան չարձակէք: Երկու ձիաւոր հասան նրա մօտ և միասին վերադարձան: Ստրաժնիկ էր նա ասաց, որ Շուշի արդէն հաշտուել են երկու կողմերը. Հայերի թաղն աւերտուած է հրգեհից. թուրքերի կողմից մարդկային կողմից աւերտուած է հրգեհից.

ձախ թևից, մի զարկ, որ կոռւի բախտը որոշեց. թուրքերն անձախոն նահանջով յետս փախան, բազմաթիւ զիակները թողնելով կանոնադրութիւնը տակ: Փախչողները վերցնելով իրանց հետ ֆուրգոնները, հանգստարանում մի քիչ կանգ առան, տարած զիակները երկի թաղելու համար, ապա ցըռուեցին զանազան ուղղթեամբ, և այնուհետեւ էլ ոչ ոք չերեաց:

Կէսօրից յետոյ անց կացաւ մի կառք, կօգակներով վշապատուած, դա, ինչպէս ստրաժնիկն էր ասել, պէտք է որ Շէլի-Ուլ-Իսլամը լինէր: Յետոյ ասել էին, որ նրա վրայ հայերն Ասկերանում գնդակ են գցել. բայց դա մի ամենալիրը, պրավակարանում արդէն կայացել է. մանաւանդ չին ուզում հաւատալ, որ հայկական թագը կրակի ճարակ է դարձել:

Քիչ յետոյ ճանապարհի վրայ մի կառք երևաց. աղդամշանը արուեց և կառքը կանգ առաւ. երկու ստրաժնիկներ մօտեցան և ինչ որ գորացին, բայց լսելի չեղաւ. աւելի մօտ գալով, ասացին որ փոստն են Եւլախ տանում: Փոստի օր էր այդ օրը, թէ ոչ, միւնոյն է, հայերը կառքը բաց թողեցին և նա առաջ անցաւ դատարկուած խճուզով:

Փամը 11-ից քիչ անց էր, յանկարծ Ղարազաջի կողմից հորիւրաւոր հրացանների ձայներ բարձրացան. հեռադիտակը պարզ ցոյց էր տալիս, որ ուռենիների մօտերը հաւաքուել են բազմաթիւ ձիաւորներ, յստաջախաղ խմբերը հանգստարանով գէպի Խրամորթ գիւղն էին գնում, իսկ հանգստարանի մի ծայրում կանգնած են երկու փուրգօններ, որոնք կամ ուզմամթերք, կամ ուստեղու պաշար էին պարունկում իրանց մէջ: Կոիւը բանի գնաց, կատաղի դարձաւ. և թուրքերի շարունակ, արագութեամբ գէպի գիւղը մօտենալը ցոյց էր տալիս, որ նրանք վճռել են ինչ գնով էլ լինի, Խրամորթը վերցնել: Այս ժամանակ Ղլիջ-Բաղ գիւղի մօտերից Խաչէնի 2 թառցիկ ձիաւորների խմբերը ձիանց ականչը մտած քշեցին գէպի կոռու վայըը: Միւս կողմից էլ հասան Քարագլուխ և Խանաբաղ գիւղերի տեղական ուժերն ու փակեցին հազարաւոր թուրքերի հոսանքի առաջը: Կէս ժամու չափ անորոշ մնաց դրութիւնը, թէ որ կողմը պէտք է ընկրկի: Սակայն անա Ղլիջ-Բաղի տակից, խճուզու երկարութեամբ՝ կարմիր խաչով դրօշակը ծածանելով, գէպի Խրամորթ սլացաւ Վարանդայի և Խաչնու մարտկոցներում դիրք բռնած մարտիկներից մի խումբ. նրանք գնդակի արագութեամբ հասան, մեծ ուժով զարկեցին թուրքերի

թուրքերի յամառութիւնը տարօրինակ էր. Շուշի անցնելը նրանք իրանց համար նշանաբան էին գրել, և, չնայելով որ ամեն գրութիւն էին մղում կորուստներով, յետոյ էլի էին յարձակւում, ուժեղացած նոր եկող խմբերով: Այդ օրը նրանք նորից կրոնեցին գէպի Ասկերան, բայց Վարանդայի ու Խաչէնի հայ գրութիւն էին լինէր Ասկերան երկու կրակի մէջ և հակառակորդը նորից խմբերը նրանց սեղմեցին երկու կրակի մէջ և հակառակորդը նորից կուները տալով փախուստ տուաւ, Ղարազաջի ուռենիների տակ հանգուել արագածի ուռենիներու կազմեցին, յայտնի չէ, միայն երկու ժագատացան թէ խորհուրդ կազմեցին, յայտնի չէ, միայն երկու ժագատացան թէ իրամորթ: Այդ գիւղը յետոյ ձի հեծան, ու քշեցին գէպի Խրամորթ: Այդ գիւղը տարօրինակ բախտ ունէր. հէնց որ թուրքերը մի որևէ կէտուտ անյաջողութեան էին հնթարկում, ձիանց գլուխները իսկոյն գէպի այնտեղ էին շուռ տալիս: Բայց ինքնապաշտպանութեան զեպի այնտեղ էին շուռ տալիս: Բայց ինքնապաշտպանութեան զեպի այդտ ի նկատի էին ունեցել, և գիւղը ուժեղացած աւ թուրքերը քշեցին, մի քանի զիակները և հրացաները թողնելով կորու տեղում:

Վարանդայի կողմի Ասկերանի շուրջը դիրքերի խմբագետներն ու զեկավարները հաւաքուած՝ զինուորական խորհուրդ են կազմել, իրանց անելիքնին պարզելու համար: Այդ միջոցին դիրքերի կազմել, իրանց անելիքնին պարզելու համար: Այնպէս կառավարութեան ինչ-որ պաշտօպահապանը գոռաց.—Կանգնիր: Կառավարութեան ինչ-որ պաշտօպահապանը գոռաց: «Կանգնիր»—Խրամանը լսելով՝ նա ստրած գէպի մարտկոցները: «Կանգնիր»—Խրամանը լսելով՝ նա ստրած

Նիկոնին թողեց և ինքը մենակ առաջ անցնելով, ցած իջաւ ձիուց ու սպասեց: Երկու զեկավաբները դիմաւորեցին նրան երկու զինուորներով: Սա պրիստաւ ե. ճ էր, հայ:

— Պարոններ, — ասաց նա. — Հաշտութիւնը Շուշում կայացաւ. հայ ու թուրք գրկախառնուած՝ հաշտութիւնը յայտարարեցին, արտասուեցին և պատկառելի թափօր կազմեցին: Բայց նահանգապետը խիստ բարկացել է, որ Շէյխ-Ալ-Իսլամի վրայ այստեղ գընդակ է գցուել:

— Ոււաէ, զզուելի սուսու. — պատասխանեցին Ասկերանցիները:

— Այսպէս, թէ այսպէս, հաշտութիւնն ընկել է. այժմ ինչքրում եմ, այստեղ հանդիսաւ լինել, քոչուորներին աղատ բաց թողնել. նրանց ապրանքները Խօջալլուի մօտ միմեանց գլուխ թափուած՝ կը կոտորուին սովից, և պատասխանատուն հայ գիւղերը կը լինին: Շուշուայ թուրք ձիւորները պէտք է վերադառնան իրանց տեղը. նրանց չկպչէք. միայն զուք կարող էք առաջ այժմ այստեղ հսկել, որպէսզի նոր-նոր խմբեր չանցնեն Շուշի և հաշտութիւնը խանգարեն: Ցուսով եմ, որ ասածներս կը լսէք:

— Իսկ Շուշին, ի՞նչ դրութեան մէջ է Շուշին, — հարցրին խօսակիցները, թէ սուրհանդակներն արդէն լուրեր բերել էին:

— Շուշին աւերուած է. — պատասխանեց պլիստուը. — հայկական թաղի ամենահարուստ մասը իրա միջի խանութներով կրակի է մատնուել: Թուրքերը կրակը գրել են երկու տնից, բայց քամին տնէ տուն է շպրտել ու հրդեհը մինչև վերի-Թօփխանէն է հասցրել:

— Իսկ թուրքերի տներից չեն վասուել: — Վասուել են մի 60—70 տուն. բայց մարդկային կորուստ շատ են ունեցել:

— Շատ լաւ. հիմա զուք ի՞նչ նպատակով էք եկել մեզ մօտ:

— Այս նպատակով, որ հանգիստ կենաք և գրէք Խաչէնցիներին, որ նրանք ևս խոհեմ գտնուեն, ու շշարժուեն տեղներից, թէ չէ յետոյ ամբողջ պատասխանատուութիւնը հայերի վրայ կընկնի: Ես էլ կանցնեմ Խաչէնցիների մօտ:

— Մենք չգիտենք թէ Խաչէնցիք ի՞նչ կը պատասխանեն. բայց այսքան կարող ենք ասել, որ մեզ համար այդ տեսակ հաշտութիւնն անհամանալի է. ի՞նչ հաշտութիւն, երբ այսօր թուրքերն աւելի մեծ ուժերով յարձակում գործեցին Ասկերանի և Խրամոր-

թի վրայ: Դրանից այս է հետեւում, որ թուրքերը պարզ ասում են—Շուշին իրա տեղը, մենք մեր տեղը: Մենք էլ պատասխանում ենք ինք. — Թուրքերը եթէ հանգիստ կենան, մենք էլ հանգիստ ենք ու հանգիստ:

Պրիստաւը զնաց: Գիշերը խորհուրդ եղաւ Խաչէնցիների հետ, թէ ի՞նչ դիրք բռնել, ու որոշուեց. — հանգիստ մնալ այն չափով, ինչ չափով որ թուրքերը կը լինին:

Խորհրդակցութեան ժամանակ էր, որ Խանաբադի արևելեան կողմից սուրհանդակը հասաւ, թէ թուրքերը Խրամորթի տակ նըկատում են, հրացաններ են արձակում, բայց թէ ինչ նպատակատում էն, այսպէս հանդիսաւ լինել, քոչուորների մօտ մարդ Ահարոնի կը լինի: Միհետյն ժամանակ էլ Աղջամի մօտերը Ահարոնների և միւսների գործարանների ամբողջ մասերը բոցավառուեցին: Դրանից էլ լաւ հաշտութիւն...:

Եթէ կոիւ է, թող լինի, — վճռեց խորհուրդը և ծրագրուեց մասրամասնորէն, թէ յաջորդ կոիւներն ինչ հղանակով պէտք է տարուեն:

Օգոստոսի 21.

Լուսաբացին թուրքերը մի տատամնոտ յարձակում գործեցին Խրամորթի տակ, բայց զա աւելի ցոյցի բնաւորութիւն էր կրում, քան թէ յարձակման: Հայերը նրանց առանց ուժեղ դիմադրութեան քցեցին և ի տրիստուք՝ վասիցին Խանաբադի մօտ գտնուող Հասան-Աղի հրաշալի ամարանոցն ու թուրքը Խօջալլու զիւլը, որ ընակչութիւնից զատարկուած էր, իսկ Վարանդայի զիւլը, որ ընակչութիւնից զիւլը գիւղի հիւղերը: Իսկ ներկողմից վասուեց Զհան-Բաղլար թուրք գիւղի հիւղերը: Իսկ ներկուում, Աղջամի շրջանում, դեռ մխում էին հայ գործարանատէրերի միլիօնանոց շինութիւնները:

— Ինչո՞ւ են թուրքերը նորանոր յարձակումներ գործում, — հարց տրուեց Ասկերանով անցնող մի սարաժնիկի, որ Աղջամից էր գալիս: — Միթէ Շուշուած հաշտութեան մասին չեն լսել:

— Լսել են, — պատասխանեց նա. — բայց ասում են՝ Շուշին իրա տեղը, մենք՝ մեր, այստեղ հաշտուել են, մենք չենք հաշտուում:

— Մեղքը իրանց վիզը, ուրիշն՝ մենք էլ չենք հաշտուում. — վճռեցին հայերը, և որոշեցին աչ ոքի ազատ չթողնել, Շուշուց վերադարձող լինի նա, թէ Շուշի զնացող, մինչև որ կառավարու-

թիւնը խաղաղացման արդար միջոցներ ձեռք կառնէ: Ուրիշ հը-նար հարկան թուրքերի յամառութիւնը կոտրելու. միայն ամենառութեղ կերպով դիմագրուելն ու նրանց հալածելն էր միում մէջտեղ:

Գիշերներն Ասկերանում շատ ցուրտ է լինում. բայց հայերը տանում էին բոլոր զրկանքները, օրերով տուն չէին տեսնում, գիւղ չէին մտնում. ծանր, պատասխանատու դերում էին, և աշխատում էին իրանց վրայ գրուած յոյսերն արդարացնել: Խաչէնցիները գրաւել էին իրանց կողմի մարտկոցների և Հարազաջի միջն ընկած տարածութիւնը, իսկ Վարանդացիները, մարտկոցների և Զայ-Բախչա կոչուող թթենիների միջի տարածութիւնը, մինչեւ Լաչին-Ղայա, ու սպասում էին լուսանալուն:

Օգոստոսի 22.

Առաւտեան երկու կողմն էլ կազմ ու պատրաստ՝ կանգնած են. իւրաքանչիւր զինուոր իւր տեղն է և սպիտակ ֆոնի վրայ կարմիր խալով զրոշակը Հ. Յ. Դ. մակագրութեամբ Վարանդայի ու Խաչէնի գաղտնի երկու դիրքերից պայմանական «պատրաստ ենք» նշաններն են անում: Քառորդ ժամ չանցած՝ Խաչէնու ամենաբարձր դիրքից «գալիս են» նշանը տրուեց: Այդ Շուշուց վերադադողներն էին, թուով 11 հոգի. Նրանք զգուշաւորութեամբ, չորս կողմերը դիտելով, եկան ու մտան Ասկերանի պատերի մէջ: Հայերն իսկոյն պատեցին նրանց և առանց սթափուելու ժամանակ տալու, սրով կոտորեցին բոլորին ու հաւաքեցին բուրգերից մէկի մէջ, որպէսզի միւս եկողները կասկածի տակ չընկնեն: Սպանուածների խուրջինները լիքն էին Շուշուայ թալանով.— Կոկայ կօշիկներ, «ըեղեկիւներ», չիքիլաներ, շալեր, սապոն, կոճակ, և այլն:

Նոյն այդ միջոցին էլ բազմաթիւ թուրքեր երկու փուրգոն վերցրած՝ ներքեց դէպի Խրամորթ ուղղուեցին. բայց հայերը միութեան գրոհով վրայ ընկան և թուրքերը փուրգոններն իրանց միջի պարունակութեամբ հայերի ձեռքին թողնելով՝ փախան դէպի

Շուշուց վերադառն անհամար ձիաւորներ եկել, Խօջալլուի մօտ էին հաւաքուել, բայց չէին իշխում մօտենալ Ասկերանին,

թէկ առանձին ոչինչ չէին նկատում: Առաջուայ 11 հոգին սպասուել էին առանց աղմուկի, իսկ Խրամորթի վրայ յարձակումը շատ կարճ էր տեսել և հրացանների ձայնը չէր հասել վերադարձողներին:

«Գալիս են». հոգից նշան տուալ Խաչէնի դրօշակը: Ահա մի 30 հոգի կողակներով շրջապատուած, զինավառ, պրիստաւն էլ առաջներին. եկան ու անցան Ասկերանով:— Ձեռք չտաք.— դիրքից դիրք անցաւ զեկավարների հրամանը. և թուրքերն ապահով անց կացան, առանց նոյն իսկ զգալու, որ չորս վելստ տարածութեամբ անց են կացել դիրք բռնած հայերի միջով, 60—70 քայլի վրայ: Կռպակները վերադարձան, և, թէ ուր զնացին, չիմացուցց: Խօջալլուի մօտ լացած թուրք ձիւորները տեսնելով, որ իրանց մի մասն Ասկերանն անցաւ առանց որեւէ միջնադէպի, մի մեծ մաս պոկուելով նրանցից, թուով 200 կամ 250 հոգի, պրիստաւի առաջնորդութեամբ, սրարշաւ եկան: Հայերն այնքան սպասեցին, որ թուրքերի վերցը գուրս եկաւ Ասկերանից, և հէնց որ ամբողջ խումբը մտաւ օզակի մէջ, չորս կողմից գժոխային կրակ բաց արին: Պրիստաւը մի քիչ կանգնեց, դէս քշեց, դէն քշեց, գոռաց, բայց գործի լըջութիւնը խոհեմաբար դուրս թուած ճանապարհուց դէպի Խանաբարդ, ապա դէպի Խանքենդի ու անհետացաւ:

Թուրքերն աջ ու ձախ կողմերից կրակի հանդիպելով, ցանկացան յետ քաշուել, բայց կիրճը փակուած էր խցանի պէս ու նրանց ճակատին որոտացին դիրքապահների հրացանները: Շուռ տուին դէպի ձախ, ցանկանալով Ղիջ-Բաղի այգիներում ապաստանել ու դիմադրել, — էլի ցանկապատերի ամբողջ երկարութեամբ հրացանների գնակներ տեղացին ճակատներին: Շուռ տուին դէպի աջ, նոյնպէս կրակի հանդիպեցին. ցանկացան քշել դէպի Հասսան Աղի քարվանսարան, սակայն նախօրօք հայերն այնտեղ, թրբական գերեզմանոցում գարան էին մտել, և թուրքերին զնդակուկոծելով յետ քշեցին դէպի վեր. թուրքերը նոյնիսկ ժամանակ չունեցան ուսից հրացան ցած քերել ու մի զնդակ արձակել: Զիանը Շուշի սոված էին մնացել, թէ յոգնած էին, յայտնի չէ, բայց այլ ևս գժուարութեամբ էին շարժւում, իսկ Սէյիթուրի և Շելլուի մօտերը հաւաքուած բազմաթիւ թուրք ձիւորներ, տմարդութեան գոնութեան չէին հասնում և միայն հանդիսատեսի գեր էին կատրում:

Կոլիւը. կամ կոտորածը երկար չտևեց. հայերը ճարպիկուց թեամբ հասնում էին ամեն տեղ, և բաւական յաջող գնդակ էին պութեամբ՝ փոռած, լցուած էր ձիանց ու մարդկանց դիակներով: Գուցէ շատերն էին փախել, յալտնի չէ, բայց միայն վեց ձիաւոր նկատուեց, որ ընդհանուր կոտորածից ճողովրելով՝ քշեցին սրարշաւ դէպի զուրդերը, Լաշին-Ղայի ձորով:

Դաշտը խաղաղուեց, արիւնոտ գործը վերջացել էր և հայեալից վերցրել էին 22 հրացան, որ Ղարաղաջից ներքեւ գտնուող այգիների բացուածքից տարածուեց զինուորական շնորի ձայնը, և ճանապարհի վրայ երեացին բազմաթիւ հետեւակ զինուորներ: Իսկոյն հայերը յետ բաշուեցին դաշտից և ծածկուեցին դիրքերում ու թթենիների տակ: Վարանդայի կողմը դարձող զինուորներից մէկը ջրաղացի կողըին ընկած գետափին չաղալի ծակերից մէկում մի թուրք նկատեց, որ ցանկացել էր այնտեղ առաստանել, կիսով չափ խցկուել էր, բայց կէսը դուրս էր մնացել, հայը նըրան դուրս բաշեց, սպանեց դաշոյնով և նրա այնալու հրացանը վերցրաւ... Արեան օր էր այդ օրը. մարդկանց մէջ դաշտն էր խօսում, վայը նութիւնն ամենառժեղ կերպով արտայայտուելու օր էր, և մարդիկ կատարում էին բատմնեցնող գործեր:

Թուրքերի կորուսով շատ մեծ էր. մեծ էր մանաւանդ նրանով, որ շատ նշանաւոր բէկեր ևս այնտեղ իրանց համար գերեզման գտան, և այլ ևս աւազակախմբեր կազմել էին կարող: Հայերի կորուսով իրանց արձակած փամփուշտներն էին, ոչ մի վիրաւոր, ոչ մի սպանուած, որովհետև թուրքերը դիմադրելու հնարաւորութիւնն չէին ունեցել:

Հայերը հասել էին Ասկերանի նախկին դիրքերին, ձիանքը պահ տուել վերևի հարթոցում, իրանք էլ դիրքից քիչ վերև նըստել, Աղքամից հասած հետեւակ զօրախումբն էին դիտում: Որորից էր, յանկարծ զինուորների կողըից մի հրացան պայթեց, էր պատահել... զու մի ասիր, ճանապարհի փոքրիկ ձորակում 6 թուրք թագ կացած են լինում, զինուորները հէնց որ երեսում են, սրանց հայերի տեղ են ընդունում, թէ ինչ է թուրքերը կրակում ու մի զինուոր վիրաւորում: հետեւանքն այն է լինում, որ այդ

դժբախտներին էլ զինուորներն են գնդակի բռնում, կոտորում: Մի քիչ էլ անց, զինուորները էլ ճանապարհն ի վեր բարձրանալով, շղթաներ կազմեցին, պառկեցին ճանապարհի կողքին ու սկսեցին սկզբում կանոնաւոր համազարկեր, սպա յաճախեցը բած գնդակներ տեղալ դէպի Վարանդայի Ասկերանը: Հայերն սկզբում կասկածում էին, թէ դէպի իրանց կը լինի ուղղած հրացանաձգութիւնը. բայց երբ գնդակներն սկսեցին նրանց կողքերի քարերին չխկ-չխկալ, կասկածը փարատուեց. իրանց տուին մօտակայ ձորը, այնտեղից վեր բաշուելով՝ ձիաները հնծան, բարձրացան սարալանջը, ուր այլ ևս գնդակ ըսնել չէր կարող: Բայց և այնպէս՝ էլի Ասկերանը բաց չթողեցին. մարտկոցները դատարկելով՝ Զհան-Բաղլարի մօտ պահակներ դրին, որպէսզի վերևից արգելին Ասկերանն անցնել:

Այս անգամ Ասկերանը փակելը զուտ ուղմագիտական տեսակէտից էր. ցանկանում էին Շուշի եղած ուժերն այնտեղ էլ փակած թողնել, որպէսզի այնտեղից վերադառնալով՝ չմիանան Աղդամի ուժերին և սահմանագծի հայ զիւղերն աւերեն: Յոյս ունէին, որ մինչև այդ կրեերը մի փոքր կը հանգստանային, թուրքերը կը ճանաչէին իսկական թշնամուն, և, կառավարութիւնն էլ, վերջապէս, բաւական կը համարէ թափուած արիւնը....

Ասկերանեան «յաղթութիւնները» թուրքերի վրայ, իհարկէ ձնշող տպաւորութիւն էր թողնում, իսկ հայերի վրայ, ընդհակառելը. նրանց մէջ պաշտպանուելու ոգին արդէն իւր տեղն էր գրաւել, «վախկոս» հայն այժմ քաջարար դիմագրաւում էր հակառակորդին, ինչ թիւ էլ կազմելիս լինէին նրանք: Դրան ապացոյց՝ քաջ Խրամորթ զիւղը:

Օգոստոսի 23.

Երեկոյեան եկած զինուորներն Ասկերան էլ մնացին, թուրքերի ճանապարհն ապահովելու համար. բայց ինչպէս նախընթաց օրերը, այդ օրը ևս ոչ մի անցորդ չէր երեսում. Օգոստոսի 10-ից դէսը հաղորդակցութիւնը միանգամայն կտրուել էր, մէկ-մէկ միայն փոստատար կառըն էր անցնում: թէկ զինուորներն Ասկերան էին գանւում, այնուամենայնիւ հայերը վճռել էին ճանապարհը փակ պահել մինչև Շուշի աջնքան ժամանակ, ինչքան որ եւլախը փակ կը լինի հայերի համար, և իւրաքանչիւր յարձակման թուր-

բերի կողմից՝ գործել հակայարձակում աւելի՛ ուժեղ կերպով։ Արյարձակումներ էլի լինելու էին, որ Աղդամի չորս կողմ ընկած թուրքերը հաշտութեան մասին մտածել անգամ չեն ուզում, դրա նշանները երեւմ էին պարզ կերպով։ Այդ օրը մի քանի ձիաւոր խմբեր Դարաղաջի մօտերը երեացին ու իսկոյն անհետացան, մի քանի խմբեր Շելլու թուրք գիւղը մտան, մի քանի խմբեր էլ, մօտերեք հարիւր ձիաւոր՝ Մուղանլուի մօտ գտնուող Ամարաթի շորտ կողմը տարածուեցին, փոքրիկ շրջանակում զանազան ուղղութեամբ շարժումներ գործեցին ու կէսօրից յետոյ մտան նախինանիկի ու Վարազաբոյնի այդիները, որ խառն են թուրք գիւղերի այդիների հետ, և կտրուած հայերի կալուածքներից։

Բայց և այսպէս, որքան ցանկանում էին հայերը, որ խաղողիւնն ընկնէ, և նախկին բարի գրացիութիւնն անեն թուրքերի հետ։ Հենց դրա համար էլ անհանգիստ կերպով սպառում էին, թէ բըր է զօրքը գալու։ որովհետև ձայն էր տարածուել, թէ-մեծ զօրք է գալիս, թէև բոլորը համոզուած էին, որ կոռի ծագումը խեղղելու համար՝ տեղական ուժերը շատ-շատ էին։

Օպոստուի 24,

Կատարեալ մեռելութիւն է տիրում ճանապարհի վրայ. ոչ
մի կառք կամ սայլ չեր անցնում. թուրբերը վերև գալ չէին հա-
մարձակում, հայերը՝ ներքե անցնել. և հայերն ուրախ էին, որ
այդ օրը «փաղաղ» պիտի անցնի, հրացաններ չպիտի շարժուին: Ասկերանում գտնուող կառավարչական զինուորների վրայ վստահ,
որ նրանց ներկայութիւնը թուրբերի Ասկերանն անցնելու ցան-
կութիւնը, կամ մօտակայ գիւղերի վրայ յարձակուելու դիտաւո-
րութիւնը կը մեռնէ, Վարանդայի կողմի զեկավարներն արձակե-
ցին զինուորներին իրանց տները գնալու և հանգստանալու, իսկ
կամաւորներին ուղարկեցին Ասկերանից հեռու գտնուող դիրքեր.
միայն հրահանգ տրուեց, որ որոշ նշանը լինելուց՝ իսկոյն հասնեն
ցոյց տրուած տեղերը:

Առաւածեան ժամը 10-ին Աղդամի կողմից փոշու ամպեր բարձրացնելով՝ երկու կառքեր երևացին, ըրջապատռած բազմաթիւ կողակներով։ Անշուշտ, «մեծանձն ոմն» էր, նրանք եկան ու կանգ առան Ասկերանի ստրաժնիկների հանրատան առաջ, ուր

կանդ էին առած և նախընթաց օրուայ հետևակ զինուորների մի
մասը: Նրանց կանգնելուն պէս՝ իսկոյն երեք հոգի սընթաց զուրս
ընկան դէպի Քեաթուկ գիւղը. քիչ յետոյ Քեաթուկից մի գիւղա-
ցի ձին քշած հասաւ այդ հարթոցը, որտեղ զեկավարներից եր-
կուսն էին գտնւում 12 զինուորներով և ասաց, թէ գիւղը «մեծ»
է եկել ու կանչում է:

— Ի՞նչու է կանչում. կամ ի՞նչ մեծ է, — հարցրին նրան:

— Հայ է. եկել է մեզ մօտ և ասում է, որ Ասկերան գըտ-նուողը նահանգապետն է, ուզում է հայերի հետ խօսել:

Կարճ խորհրդակցութիւնից յետոյ, զեկավարներից մէկը ձի նստեց ու ճանապարհուեց դէպի Քեաթուկ։ Այստեղ նստած էր մի հայ երիտասարդ, չչրքէզկան հագին։ Սովորական բարենքրից յետոյ, նա սսաց.

— Գիներալ Տակայշվիլին եկել, Ասկերան է գտնւում. ես նրա
մօտ ժամանակաւորապէս թարգմանի պաշտօն եմ կատարում. ինձ
ուղարկեց, որպէսզի հայերին կանչեն Ասկերան, խօսելու համար:
Եւ պէտք է շտապել, որովհետև նա շուտով կուղերըուի Շուշի:

— Գեներալը ծուշի է զնում շտապով և պահանջում է ժողովրդին կը բարեկարգ մօտ. Երբ ժամանակ չի տալիս, ուրեմն, գիւղացիների ներկայանալին էլ չի լինելու, — պատասխանեց խօսակիցը:

—Ներողութիւն, գուք եթէ կամենաք, կը հասցնէք, —ասաց
նա ժպտայով:

— Ի՞նչու էք ենթադրում:

— Ուստինեակ այստեղ ասացին, որ գնում են իրանց «միջին» կանչելու, որպէսզի գործը գլուխ բերէ: Այսպէս թէ այնպէս, հարգաւոր է գեներալի մօտ գնալ, որովհետև նա շարունակ կրկնում էր զարմացած, թէ՝ էս ի՞նչ բան է: Եւլախից մինչև այստեղ թուրքերն ինձ բողոքով գնդակակոծեցին, բայց ոչ մի հայ չերեաց գանգատով: Եռեկի հայերը գանգատուելու տեղիք էլ չունին:

— Հըքան գեներալն է զարմացել, նոյնքան էլ զարմանալ կա-
րելի է նրա միամտութեան վրայ. հայերը իրանց տները զիշեր-
ցերեկ հսկելով՝ զօռով են աւերածութիւնից պահում. տնից մի
քիչ դէպի դաշտ հեռանալը՝ մահուան դատավարուել է նշանա-
կում, ուր մնաց թէ՝ բողոքելու համար Աղջամ կամ Եւլախ դուրս
դայ:

Կարճ խոռակցութիւնից յետոյ նա ճանապարհուեց, տանելով

գեկավարի որոշումը, որ շուտով իրանը էլ կը ներկայանան Տակայշիլուն:

Կէս ժամից յետոյ երկու ղեկավարները տասը զինուոր թողնելով թթենիների տակ, իսկ իրանց հետ վերցնելով զինուորական խմբակետին ու մի ուրիշն, իջան դէպի գեներալ-նահանգապետը:

Դուրս գալով խճուղին, ձիանցը մտրակեցին և արշաւասոյր հասնելով գեներալին, մի 50 քայլ մնացած՝ ձարպկութեամբ ցած թռան, ու վստահ քայլերով մօտ զնացին: Նրանց դէմքերը փոշոտ և սեացած էին արկից. հագուստը՝ անպաճոյն, որոնց վրայից դեռ նոր հանած պատրոնտաշների հետքերն էին երեսում: Նահանգապետն ու նրան շրջապատող օֆիցիէները մի առանձին հետաքրքրութեամբ՝ նորեկներին էին դիտում ու զգում, որ նրանք իրանց արժանապատութիւնն իմացող մարդկանցից են. կողակներն ու զինուորները մատով նրանց ուղմական ու անզրավարտիկում ամբացրած շորերն էին ցոյց տալիս և ինչ-որ փսխում:

—Պարոններ, —ասաց նահանգապետը, որոշ ժամանակ դիտելուց յետոյ.—մեծ դժբախտութիւն է պատահել. Ղարաբաղում հսկուց երկու հարևան ազգերի արիւնը. շատ մարդկանց տունքաւական է. ես եկել եմ և ոչ մի միջոց չպիտի խնայեմ խաղաղիցին հաստատելու համար: Մտէք զիւղերը, հասկացրէք գիւղորդերը կատարեն: Թէ չէ սա ինչի՞ նման է, կրկնեց զեներալը,

—և սա արուել է հայերի ձեռքով, հաշտութիւնից յետոյ:

Թարգմանը ցանկացաւ գեներալի ասածը թարգմանել, բայց ղեկավարներից մէկն ընդհատելով թարգմանին, ուղղակի դարձաւ նահանգապետին.

—Զերդ զերտապանցութիւն, ամբողջ հոգով ուրախ ենք և շը-նորհաւորում ենք ձեր գալուստը, որովհետեւ համոզուած ենք, որ դուք անշուշտ խաղաղութիւնը կը վերականգնէք. իսկ մենք ինչ ենք ցտնկանում ի սրտէ, եթէ ոչ խաղաղութիւն և միայն խաղաղութիւն: Մեզ երբէք ցանկալի չի եղել և ցանկալի էլ չէ այժմ թուրքի արիւն թափելը: Սակայն նանգամանքները մեզ այնպիսի:

պայմանների մէջ են դրել, որ վաղը մեր հայերը կարող են նոյն խոկ այնպիսի գաղանութիւններ անել, որ ինքներս կը զգուենք. միայն թող յայտնի լինի, որ զրանում մեղաւորը հայերը չըլիտի լինին...: Իսկ ինչ վերաբերում է նրան, թէ հաշտութիւնից յետոյ մենք Ասկերանում կոտորել ենք թուրքերին, այդտեղ ձերդ գերազանցութեանը թիւրիմացութեան մէջ են գցել, որովհետեւ չկայ աւելի հեշտ բան, քան ստուգելն այն փաստի, որ հաշտութիւնից յետոյ թրամորթ զիւղի վրայ յարձակուողները թուրքերն են եղել, և առհասարակ՝ Օգոստոսի 17.ի առաւօտից դէսը, միայն այսօր՝ միջտ նրանք են եղել աւելի բան 10—12 յարձակում գործողները, և հայերը մեղաւոր չեն, որ թուրքերն են եղել յաղթուողները:

—Եյդ բոլորովին ձիշտ չէ.—ասաց գեներալին ուղեկցող Աղդումի թուրք պրիստաւ Իրրահիմ-բէկլին:—Այստեղ հայերն են յարձակուել ու վերադարձող թուրքերին կոտորել, ինչպէս և պատմեցին ձերդ գերազանցութեանը՝ կոտորածից աղատուած թուրքերն, Աղդամում:

—Ես շատ լաւ գիտեմ, ովքեր են մեղաւոր,—վրայ ըերաւ գեներալը, առանց պատասխանելու իրրահիմ-բէկլին:—Հայերն իբրև աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, արեան հետ զործ չպէտք է ունենան. ես հաստատում եմ, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել: Բայց կրկնում եմ. ես եկել եմ, այժմ էլ յարձակուող չի լինի, ուրեմն՝ ինքնըսահինքեան աւելորդ է զառնում և պաշտամանուելը: Թող այսուհետեւ Ասկերանում զինուած մարդ չինի. հակառակ գէպըում՝ կը պատժեմ իիստ կերպով:

—Հայերը գոհ չեն, որ տուն-աեղ թողած, ինքնապաշտպանութեան համար սար ու ձոր են ընկել.՝ պատասխանեցին ներկայացողները.—մեր խորին համոզմունքն է, որ անաշառութիւնը վերջ կը դնէ հայ-թրքական ընդհարմանը, և այդ անաշառութիւնը մանանայի պէս սպասում ենք ձեզնից:

Նահանգապետը մի քիչ կանգ առաւ, ապա նկատեց.

—Համաձայն եմ ձեղ հետ, բայց դուք և թուրքերն էլ պէտք է չխանգարէք խաղաղութիւն հաստատողին, ես չեմ ցանկանում ոչ կողակների նագայկաները գործի գնել, ոչ էլ զինուորների սուբինները: Այս բոլոր փոռած դիակները խաղաղութեան մասին շատ բիշ բան են ասում:

— Զերդ գերազանցութիւն, — գարձաւ հայերից մէկը. — մեզ այդ գիտակներն էք ցոյց տալիս, և մենք ամաչում ենք. բայց ժրտեղից էին դրանք. չէ՞ որ դրանց մէջ նոյն իսկ Արաքսի այն կողմից մարդիկ են եղել. ստուգեցէք, և կը հաստատուի այդ. թնչ ունէին ալսածող, չէ՞ որ դրանք ոչ առետրի էին եղել, և ոչ էլ հարսանիքում քէֆ անելու. ոչ, այլ արիւն, հայի արիւն թափելու, հայի կին բռնաբարելու, հայի տուն աւերելու. Մենք միայն պաշտպանուել ենք: Ի նկատի պէտք է ունենալ որ մենք ամենախն չենք մեղագրում թուրք ժողովրդին, այլ նրանց խաներին ու բէկերին, որ ինչ-ինչ հովերից տարուած, ժողովրդին ծառայեցնում են իրանց նպատակներին: Թուրք բէկերն ու խաներն ազգեցիկ մարդիկ են. գրել են իրանց հպատակներին. — այս ինչ թուին հաւաքուցէք Շուշին աւերելու, հայի հարստութիւնը թալանելու, և ամեն կողմից աւազակաբարոյ ու հլու հպատակներ թուել են գէպի մեզ: Եթէ մենք նպատակ ունեցած լինէինք թուրքերի հետ կորի մղելու, մենք էլ նախօրօք իրաքանչիւր գիւղից մի քանի հոգի Շուշի կը հաւաքէինք, և գուցէ այն ժամանակ ձեր ակնարկած գժրախտութիւնս աւելի սոսկալի լինէր. բայց այդ մենք չենք արել, և մենակ հէնց այդ փաստն ապացոյց է, որ մենք չենք եղել գժրախտութիւնն առաջ բերողը. Միայն, ներեցէք համարձակութեանս, զուք կը շեղուէք, յանցաւորներին գտնել չէք կարող և խաղաղութիւնը կը տուժի, եթէ ձեր աջակիցները պրիստաւները լինին, կամ, առհասարակ, սատիկանութիւնը:

— Ոչ, — պատասխանեց գեներալը. — իմ աջակիցներս ժողովրդի բարեմիտ ներկայացուցիչները պէտք է լինին, և ամեն ոք ազատորէն պիտի կարողանայ իւր կարիքների մասին ինձ յայտնել:

— Կօմիտէտ թիրեանն աւը Ալլահ երիսը, համսը օնըն իշխալը զը — ասաց պրիստաւ. Իրբահիմ-բէկը մի հայ գիւղացու, որ նոր միաթուկ գիւղից այգին գալով մօտեցել էր խօսողներին:

Այդ որ լսեցին հայերը, դարձան գեներալին:

— Ահա, ձերդ գերազանցութիւն. պ. պրիստաւը մեղագրում է կօմիտէտներին և մեզ թուում է, մի հասարակ պատճառով. որովհետև այդ կօմիտէտները, եթէ եղել են, ապա թոյլ չեն տուել որ թուրքերն աւերեն հայկական գիւղերը, ու իրբահիմ բէկը տրտնջում է: Մթէ հայերը չպէտք է պաշտպանուէին, որպէսզի մեղքը նրանց վրայ չընկնէր. մեր կանայք ու երեխաները ահա քանի օր

է, անտառներումն են ապրում, տան իրեղէնները հողի տակ են թաղել, որպէսզի աւարի չմատնուին. բայց մտէք թուրքի գիւղերը. այնտեղ էլ այդպէս է. հաւատացած ենք, որ ոչ նրանք ազատ են, որովհետև վտանգի չեն ենթարկուած հայերի կողմից: Չէ, կոմիտէտները եթէ կան էլ, իրանք-իրանց կը չքանան, եթէ վերացուին նրանց ստեղծող պայմանները: Զերդ գերազանցութիւնն ինքներդ ասացիք, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել, մենք էլ պաշտպանուել ենք: Սակայն բաւական է. առաջ, այժմ և յետոյ՝ հայերս միայն մի բան ենք ցանկանում՝ խաղաղութիւն և խաղաղութիւն:

— Գնացէք ուրեմն և հանգիստ մնացէք. խանգարիչներն ամենախիստ պատժի կ'ենթարկուին:

— Իմ ամուսինս ոչ մի միջոց չպիտի խնայէ՝ խաղաղութիւնը վերականգնելու, — ասաց նահանգապետի կինը, որ մինչև այդ ուշագրութեամբ գիտում էր հայերին ու լսում և շարունակ ժըպտում, երբ նրանք, այդ մաշուած, փոչէթաթախ մարդիկ խօսում էին առանց-գիւղացիներին յատուկ—ստորանալու և ձեռները կրծքին ծալելու. — ասացէք ձեր կանանց և մայրերին, որ ապահով լինեն և յուսան, որ ամուսինս ամեն ջանք գործ պէտք է դնէ՝ խաղաղ գրութիւնն արմատաւորելու:

Խօսակցութեան վերջում իրահիմ-բէկն ակնարկեց, որ հայ պրիստաւ եարալեանը իւր կոչման բարձրութեան վրայ չի եղել, թուրքերին Ասկերանով առաջնորդելու ժամանակ, որի պատճառով ամենամհծ կոտորածը եղաւ թուրք'որի: Հայերն ամենախիստ կերպով րողորեցին այդ մեղադրանքի զէմ, առարկելով որ մեղադրականները՝ այն ևս անտեղի, չեն նպաստի խաղաղացման գործին, իսկ եարալեանը պատճախանատու չէ թափուած արեան համար, և հայերը, եթէ ցանկանան, այդպիսի մեղադրանըները, բայց աւելի գրական, կարող են շատ գտնել՝ թուրքերին մեղացրելու համար, մանաւանդ Շուշում կնքուած հաշտութիւնից յետոյ:

Մի քանի խօսը ևս աւելացնելով, գիներալը կառք նստեց ու ձանապարհուեց Շուշի, պատուիրելով, որ հայերը չհամարձակուեն կաչել այն թուրքերին, որոնք պէտք է գան գիտակները հաւաքելու: Ներկայացած ղեկավարները զլուխ տուին և ձի նստելով ըշեցին, կարկառն անցան և մտան թթենիների տակ, որտեղ մի տասնեակ զինուորներն էին զտնուում:

Նրանք և մօտակալոյցից հաւաքուած մի քանի գիւղացիներն ամենայն հետաքըրբութեամբ հարցուփորձ էին անում. լինչ ասաց գեներալը, բարկացկամ է, յոյս կայ խաղաղութեան, որտեղ գնաց, ով է ուղարկել, և այլն. Եւ նրանց բոլոր հարցերի վերջը կասկածու նկատողութիւնն էր.—իսկապէս հաշտութիւն կը լինի:

— Իսկապէս կը լինի...

— Ինարկէ, կը լինի, եթէ ուզենան.—ասաց գիւղացիներից մէ-
կը.—աւել չեմ ուզում, ինձ իրաւունք տան, հարիւր զաղախ էլ՝
խօսք տամ, որ մի ամսումը Վարանդան էլ, Խաչէնն էլ, Աղդամ-
Բասարն էլ հանգստացնեմ: Հայ մեղաւորներին էլ, թուրք մեղա-
ւորներին էլ, զառաղաջի (կախաղան) կը քաշեմ ժողովրդի առաջ,
մարդասպաններին, թալանչիներին որտեղ էլ լինին, կը գտնեմ,
կախաղան կը հանեմ, մնացածներն էլ կը տեսնեմ, որ չարագոր-
ծին փրկութիւն չկայ, և բոլորը պոչները կը ծալեն:

Թրը թեքում էր. հաւատացած լինելով, որ գեներալի ներ-
կայութիւնը կը զսպէ թուրք հրոսակախմբերին և նրանք Ասկե-
րանի վրայ չեն արշաւի, երկու պահապան զնելով Նահատակի-
Սեռին, զինուորները վերադան գիւղերը:

*

**

Տակայշվիլու գեղեցիկ բառերն ու խոստումները միայն իբրև
բառեր ու խոստումներ էլ մնացին. Նրա զալը ոչ մի էական փո-
փոխութիւն չմտցրեց տեղիս կարգերի ու գրութեան մէջ. Էլի
զրեթէ ամեն օր փոքր ու մեծ կոխներ էին լինում այս ու այն
կողմերում: Օ հոստոսի 24-ին նա Ասկերան հասաւ, յուսազեց,
խոստումներ տուաւ, սպառնալիքներ կարդաց հաւատութիւնը խան-
գարող կողմերին, ու զեաց Շուշի: Բայց հէնց հետեւեալ օրը,
25-ին, թեթև ընդհարում եղաւ Շելլուի գլխին. 26-ին երկու
մասնակի թեթև ընդհարումներ՝ Խրամորթի տակ, որ միայն
մի քանի անդամ հրացան որոստալով վերջացաւ. 28-ին հարիւ-
րաւոր թուրք ձիաւորներ հաւաքուեցին Ամարաթի գլուխը,
բայց ընդհարում չեղաւ. Սեպտեմբերի 1 ին թեթև ընդհարում ե-
ղաւ և հայերը խլեցին 11 ոչխար. 2-ին թուրք ձիաւորներ ցոյց
անելով անցան Նախիջևանիկ, Փիրջամալի ու Վարազարոյնի
դաշտերով և ծածկուեցին Աւգալ-Գելաֆլուի այգիներում, առանց
հրացանաձութեան. 3-ին դաշտից թուրքերը գերեցին մի հայ
տաւարածի, յետոյ բաց թողին: Այդ բոլորի մասին տեղեկութիւն

էր տրւում Խանքենդու պրիստաւին ու Ասկերանի պահակների
գլխաւորին. սակայն ոչինչ. խնդրազրերը մնում էին իբրև մե-
ռած տառեր, որից թուրք անհանգիստ տարրերն աւելի ու աւելի
ոգեստուելով՝ աներեսանում էին. այդ ամենի հետեանքն այն եղաւ,
որ գիներալի գալուց հազիւ տասն օր անց, ինքը գեռ Շուշի շանթեր
թափելիս այս ու այն անձնաւորութեան հասցէին, թուրք Քեարպու-
թոչուորներն ու Աւգալ-Գելաֆլուեցիք Սեպտեմբերի 3-ին լրյու 4-ը
յարձակուեցին Միլաջալլուի վրայ. 5 ին թեթև ընդհարում եղաւ
Նախիջևանիկի տակ, Մոսունց-թափումը. 6-ին Աւգալ-Գելաֆլուի
կուել պատահեց, որին յաջորդեց հէնց նոյն օրը՝ Վարազարոյնի
կուել: իսկ զեներալը դեռ սպառնում էր: Վերջապէս Գելաֆլուի
աւերումից 3 օր յետոյ, Սեպտեմբերի 9-ին, նաշալինիկի պատուէ-
րով ու Տակայշվիլու հրամանով՝ հայ աղսախկալները Վարանդայից
ու Խաչէնից հաւաքուեցին Աղգամ զաղախների պահպանութեան
տակ, հաշտութիւն հաստատելու: Վերագարձողները իրեխայական
միամտութեամբ սննդում էին, որ հաշտութիւնը կատարեալ է,
թուրքերն անչափ ուրախ են, և այսուհետեւ ոչ մի բան պատահել
չի կարող: Նրանց ասածները լցնում էր ժողովրդի սիրտն անկեղծ
ուրախութեամբ՝ և երանի էին տալիս, թէ երբ սէտք է թուրքի
երես տեսնեն, նրա հետ սիրալիր քաղցր զրոյցի բռնուեն:

Եւ իսկապէս հորիզոնը մաքրում էր ամպերից. թուրքերից ո-
մանք սկսեցին մտնել գիւղերը, մրգեղէններ, չայ-շաքար էին, բերում,
ծախում: Մուղանլուեցի յայտնի աւազակ Աւգուլ-Գեարիմը ազա-
տորէն մտնում էր Փիրջամալ, Վարազարոյն և հանաքներով ծիծա-
ղեցնում գիւղացիներին, երբեմն էլ նկատելով. —այ հայեր, տես-
նում էիր զնզակս ինչպէս էր գալիս: —ինչպէս չէ—պատախսա-
նում են գիւղացիք. տեսնում էինք, բայց միշտ գաբանիդ փի-
(ճարպ) էիր կապում (փախչում էիր): Եւ երկուսն էլ սրտաբաց
քրիչում էին: Մինչև անզամ պատահեց, որ Սեպտեմբերի եր-
կրորդ կիսամսեակում հայերն Աղգամով զէպի եւլախ, իսկ թուր-
քերն Ասկերանով զէպի Շուշի սկսեցին գնալ ու գալ, թէկ անի-
ծուած երկիւղն ու անվատահութիւնը չէր հեռանում գնացողների
սրտից: Այդ էլ ոչինչ. ժամանակի ընթացքում կը հարթուէր.
բայց «շէլթանը» հանգիստ չէր: Նոյեմբերի 26-ին ու 27-ին թուր-
քերը նորից վրայ տուին Խրամորթին և ճանապարհն էլի փա-
կուեց:

Նոյեմբերի 28.

Ընդհարումներն սկսեցին աւելի մհծ թափով. երկիւղ կար, որ Շուշում ևս կոկան: Ասկերանը փակուեց, դժուար կացութեան մէջ դնելով քաղաքի թուրքերին, որովհետև հրանց համար Եւլախից բաւարար պաշար չէր հասցրած. ովզն անխուսափելի էր, մինչդեռ հայկական մասը մթերքներ մտնում էին շրջակայ հայ գիւղերից:

Թուրքերը 26-ի և 27-ի յարձակումները վերսկսեցին 28-ին. քաջ Խրամորթ գիւղը աչքի փուշ էր դարձել նրանց համար և անպատճառ ցանկանում էին մոխրակոյտ գարձնել նրան: Օրը միգապատ էր, վտանգը շատ մեծ. թուրքերը 1500-ից պակաս չէին գիւղի և մէջից օգտուելով՝ ծածուկ, ձորն ի վեր մօտեցել էին գիւղից. Սկսուեց կատաղի կոխւը. հրացանների որոտը երբեմն խւառամ, երբեմն որոտում էին ամբողջ գծի վրայ—թաւ-Գեադուկից մկան, մինչև Ղարաղաջ. իսկ կողակներն Ասկերանի պահականոցում հանգիստ նստած՝ ականջ էին դնում որոտներին....:

Յամառ խիզախումով՝ թուրքերին յաջողուեց մի կողմով գիւղը մտնել. պարզ էր, որ զործի հետևանքը սարափելի պէտք է լինէր, եթէ այդ իսկ միջոցին չհասնէր Վարանդայի թուոցիկ խմբի մի տասնեակը և Խաչէնի երկու թուոցիկները: Մի քանի տուն արդէն հրդեռուած և տասից աւելի աներ թալանուած էին, երբ օգնութեան հասած խմբերը խրուեցին թուրքերի մէջ. կըուտը էին քան քայլի վրայ, իսկ երկու տեղ արդէն ձեռնամերձ կրուի էին մտել: Վերջապէս թուրքերը յետ մզուցին, 13 դիակ թողնելով տների առաջ, իսկ հետները տարածը յայտնի չեղաւ: Հայերից սպանուել էին մի կին և մի ծերունի, որոնցից մէկի գլուխը տարել էին:

Այդ գէպքը խորապէս վրդովեց հայերին, մանաւանդ որ վը-նասուողը քաջ Խրամորթ գիւղն էր եղել, ամենքի սիրած Խրամորթը: Հայերը, մանաւանդ Խրամորթեցիք, վճռեցին անպատճառ իրանց «համուսը» տեղը բերել:

Երբ Ասկերանի կողակներին այդ գէպքից յետոյ հարցրին, թէ ինչուն նրանք չեկան կոխւը դադարեցնելով՝ «իրաւունք չը տուին», պատասխանեցին:

Նոյեմբերի 29.

Դէպքի մասին այդ օրը գիւղացիք իսկոյն խնդրագրեր ներկայացրին գաւառապետին ու Տակայշվիլուն. ապարդիւն ջանքեր... ահա այդ անտարբերութիւնը տրամադրում էր հայերին ու թուրքերին՝ շարունակել տնաւեր յարձակումները: Նորից մարտկոցները գրաւուեցին երկու կողմերից, և ոչ ոք չարգելեց տեղի կողակները ժպտում էին հայերին, ինչպէս Աղդամինը՝ թուրքերին:

Նոյեմբերի 30.

Զնայելով, որ Ասկերանը բաց էր Սեպտեմբերի կէսերից, բայց Նոյեմբերի սկզբներից Շուշի պաշար չէր մտնում, թուրքերը չէին վստահնում Ասկերանով բարձրանալ, իսկ հայերը՝ Աղդամով անցնել. մանաւանդ Գանձակի գէպքերը մեծապէս ազդել էին մարդկանց սրտերին ու դրութիւնը լարել: Բայց և այնպէս, ինչ գնով էլ լինէր, թուրքերը ցանկանում էին քաղաքն ապրանք մտցնել: Եւ ահա այդ օրը Ղարաղաջի մօտ Փուրգօնների սպիտակ ծածկոցներ երկացին. «Փուրգօններ են գալիս, Փուրգօններ են գալիս», կանչեցին ստրաժնիկները՝ պահականոցից: Հայերը քարան մտած այնքան սպասեցին, որ Փուրգօնները Ղարաղաջից բաւական բարձրացան. դարանականները ցանկացան շրջապատել ու կոտորել Փուրգօնչիներին, բայց այդ նրանց թոյլ չտրուեց. ողի մէջ պարպած փամփուշներից թուրքերը սարսափահար, թողեցին Փուրգօններն ու փախան, բոլորը թողնելով հայերի տրամադրութեան տակ: 64 Ճի, 16 Փուրգօն իրանց միջի ապրանքներով՝ իսկոյն հայերը թալանեցին, որոնց մի չաղլիկ բաժինը ստրաժնիկները քաշեցին իրանց մօտ:

Այդ գէպքից յետոյ, ինչպէս և առաջ, էլ Փուրգօն չերևաց, մինչև Դեկտեմբերի 5-ը:

Դեկտեմբերի 5.

Էլի Ղարաղաջի կողմից Փուրգօններ երևացին, կողակների առաջնորդութեամբ. որոշ կարգագրութիւններ անելուց յետոյ, զինուորները նշանակուած դիրքերը գրաւեցին. Փուրգօնները եկան ու մօտեցան Ասկերանի պատերին: Զինուորական խմբապե-

առ փշեց շեփորը և դարանամուտ հայերը յանկարծ բուսան ֆուր-
գօնսերի չորս կողմին:

—Արքունական ապրանք է, արքունական ապրանք է,—բար-
ձրածայն կանչեցին կողակներն ու խնդրեցին չպչել բեռներին:

—Պէտք է ստուգել, —ասաց խմբապետը. —Հայերը սովից կո-
տորւում են Շուշում, դուք թուրքերի համար ապրանք էք տա-
նում. եթէ ուզում էք, անկորդմապահ կերպով տարէք երկու կող-
մերի համար էլ:

—Ստուգեցէք, —ասաց օֆիցիէրը և ծոցից ապրանքների թըդ-
թերը հանեց:

Իսկապէս՝ ապրանքները նշանակուած էր զօրքի համար, ինչ-
պէս փաստաթղթերն էին ասում. բայց և այնպէս, պատեցին ըը-
սակները, որ լի էին հաճարի ալիւրով: Ստուգելուց յետոյ խըդ-
բապետը փշեց շեփորը և հայերն արագութեամբ ձի նստելով՝
անհետացան այգիներում ու զիրքերում, զարմանք պատճառելով
բոլորին իրանց կանոնաւորութեամբ:

Դեկտեմբերի 11.

Գաւառապետի օգնականն ու երկու օֆիցիէր մի հարիւրակ
կողակներով Ասկերան կանգ առնելով՝ յայտնեցին, որ այդ օրը
գալիս է 44 ֆուրգօն, Շուշի անցնելու, իսկ Աղդամում եկել,
կանգ են առել 90 հայ զինուորներ, որոնք ծառայութիւնից են
վերագանում. եթէ հայերը կպչեն ֆուրգօններին, թուրքերն
սպանում են իրանց մօտ պատանդ վերցրած 90 հայերին կո-
տորել:

Հայերը չին ուզում հաւատալ, բայց օֆիցիէրն ասաց.

—Իրաւունք ունիք չհաւատալու, սակայն եթ կասկածը փա-
րատելու համար՝ ֆուրգօնների հետ գալիս է այն զինուորներից
մէկը, իւր ընկերների դրութեան մասին ձեզ հետ խօսելու: Իսկ
մինչեւ ֆուրգօնների գալը, աւելի լաւ է, ցոյց տուեք ձեր կողակ
գցելու նորիքը:

Հայերի ինքնասիրութիւնը շոյուց: 15 կոպէկանոց պապի-
րոսի մի կարգուն կպցրին մի ծառի բնի և կանգնեցին:

—Առաջ դուք, —ասաց խմբապետը, դառնալով օֆիցիէրին:
Օֆիցիէրը ժպտալով՝ վերցրաւ հրացանը, նշան բռնից ու ար-

ձակեց. —Հկալու, մէկ էլ, մէկ էլ, —չեղաւ, չորրորդ անգամը միայն
նշանի ծայրը քերեց: Այն ժամանակ մօտեցաւ խմբապետը, նշան
առաւ, և արձակեց. գնդակը նշանի կենդրունին էր տուել. մէկ էլ
արձակեց, նոյնական կողակներն ու կողակ-
ները զարմացած նայում էին, միւս զիսւորական խմբապետը նը-
շանը փոխեց, ուրիշ թուղթ կպցրաւ, և հանեց ատրճանակը. մէկ,
երկու, երեք... և երեք գնդակներն էլ զարկեցին նշանին: Այդ յա-
նողութիւնից ոգկորուած, խմբապետներից առաջինը թռաւ իւր
կրակու ձին ու մարակեց: ձիու ոտները գետին չէին կպչուա
կարծես. իսկ հեծեալը թոչում էր զիի տակով, կողքից կախւում,
հրացան նետում ու նորից բռնում: Երբ հասաւ Ասկերանի պատե-
րին ու երեսը շուռ տուաւ դէպի օֆիցիէրների կանգնած տեղը, իւր-
թեց ձիուն, ու դաշոյնը հանձնց. ձին թռած ժամանակ՝ նա դաշոյնը
դնում էր ձեռքի ափին, աջ ձեռքից շըրտում, ձախ ձեռքի ափին
կանգնեցնում ծայրի վրայ, և այլն:

—Սուկին-սին. —փսխալով գովեցին կողակները:

Մինչ այս, մինչ այն՝ ֆուրգօնները, թուով ձիշտ 44, եկան
հասան. չեին բեռնաւորուած այնպէս, ինչպէս հարկաւոր էր. երեկ
թուրքերը կասկածել էին, թէ հայերը պատանդների գրութիւնը
կարող են ի նկատի չունենալ և ապրանքները թալանել: Իւրա-
քանչիւր ֆուրգօնում 10-12 քսակ չայ-շարքար, գարի ու ալիւր
կար: Այնտեղ էր և օգնականի ասած հայ զինուորը:

—Իսկապէս Աղդամում ընկերներ ունիս. —հարցրին նրան:

—89 հոգի. —պատասխանեց նա. —եղբայրներ, աղաչում եմ,
ոչ մի վնաս մի տուէք սրանց. Աղդամի թուրքերն սպառնացել
են, որ եթէ այս ֆուրգօններին մի բան պատահի, նրանց բոլո-
րին կը կոտորեն: Ընկերներս խնդրեցին, աղաչեցին, որ իրանց
դրութեան մէջ մտնէք և ֆուրգօնները բաց թողնէք:

—Ո՞չ միայն բաց կը թողնէնք, այլ և անց կը կացնէնք մին-
չե Խօջալլու: Եթէ այնտեղ հայեր չլինէին մնացած, մենք ոչինչ
չէինք անի, միայն թէ իրանք, իրանք հանգիստ կենային:

Քառորդ ժամից յետոյ ֆուրգօնների կարավանը դուրս գա-
լով Ասկերանի պատերից, ուղևորուեցան գէպի Շուշի, որոնց մին-
չե Խօջալլու միացաւ և մի տասնեակ հայերից:

Դեկտեմբերի 12.

Առաւոտեան եկան մի քանի ֆուրգօններ, երեկ յիշուած հայ զինուորներով լիքը. Մըջակայ զիւղերից հայերը մեծ ուրախութեամբ, զուռնա-նաղարայով դիմաւորեցին եկողներին, որոնց երեսներին կատարեալ երջանկութիւնն էր փայլում:

— Փառք Քեզ, Աստուած, — ասում էին Նրանք, — ո՞վ էր կալոր ծում, որ սաղ սալամաթ այստեղ կը հասնենք:

—Միթէ վախենում էիք. —Հարցը ին նրանց:

— էդ էլ խօսք է... Մինչև Բարգա, ոչինչ, լաւ էր. բայց
Բարդից գեսը՝ շատ վատ. Ղարբանդի մօտ թուրքերը ձեռքով գը-
լուխ կտրելու նշաններ էին անում, ու հայոցում: Իսկ Աղջամում...
մենել ենք, պրծել. ճրենդ-ճրենդ դողում էինք, թէ այստեղ դուք
թուրքերին մի բան կ'անէք և այնտեղ մեր վերջը կը տանք: Նատ-
երկիւղ էինք կրում, թէ լրբի մէկը կը գայ և սուտ տեղը կ'ասէ,
թէ Ասկերանում հայերը կոտորեցին թուրքերին, նրանք էլ մեզ
սրախողիսող կ'անեն: Բայց փառք Աստուծոյ, պրծանք:

Նորեկներն ու տեղացի հայերը փոխադարձ ուրախութիւն յայտնելուց յետոց, երկու տասնեակ ձիւաւորների ուղեկցութեամբ Փուրգները տարան, անց կացրին, ապա մի փոքրիկ խմբա թռողներով Ասկերանում մնացածը հեռացան դէպի գիւղերը:

Զօրք բաւականաչափ եկել էր. կային և նոր պաշտօնեաներ միայն դրութիւնը միշտ հինն էր մնում, հայ-թըքական ընդհան ըռումների վերջը չէր տեսնուում, մինչդեռ հայերը կատարելապէ լուսներ էին անսիրջ կոփիւներից:

የከበደከመቦች 13 - 26.

Դրութիւնը շարունակում էր լարուած մնալ. ամեն օր նույսութիւնը էին գալիս կամ Գանձակից, կամ Շուշոց, կամ հարևանացաներից, միշտ չափազանցրած և միշտ գրգռիչ:

Այդ միջոցներում հաշտեցնելու փորձեր արաւ նաշանիկ օգնական իշխան Վաչինադաէն, որ կարծես անկեղծօրէն ցանկս նում էր դրական մի բան անել. բայց նրա քայլերը դէմ առաջ թրքական անհետատեսութեանը և հաշտեցնելու ձգտումները վժեցին. Դեկտեմբերի 17-ին, այն օրը, երբ իշխանը կերպին

Նակցութիւնն էր անում հայերի հետ հաշտութեան մասին, թուր, ըերը Ղարաղաջի մօտերը դէպի Ասկերան շարժուեցին և հաշտութիւնը մեռաւ:

Դեկտեմբերի 20-ին թուլքերը նորից շարժուեցին դէպի Ասկերան, ի հարկէ, այժմ ոչ դէպի Շուշի անցնելու. այլ հէնց էն-պէս. Ասկերանում գնդակներ փոխանակելը սովորութիւն էր գարձել. միայն ուշագրաւն այն է, որ միշտ ապրանքով կամ մարդկանցով կորուստ էին ունենում, բայց էլի՞ ձեռք չէին քաշում. կարծես մի տեսակ հիւանդութիւն էր գարձել նրանց համար այդ ցուրտ ձմբանը 50—60—100—200 հոգով զուրս գալ Ղարաղաջի ուռենիների տակ, դէս քշել,^Պ դէն քշել, մի երկու ժամով կոխւ սարքել, մի քանի տասնեակ կամ հարիւրաւոր թուրքերի փամփուշտ վատնել ու վատնել տալ, մի երկու զիսակ թողնել և քշել դէպի Աղդամ։ Հայերն արդէն ձանձրացել էին, սակայն Ասկերանից հեռանալ չէին կարող. այնտեղի պահակախումբն ամբողջ ձըմեռն անց կացրեց ձիւնի ու ցրտի ենթակայ, բայց միշտ դիրքերում։

21-ին հայերը վառեցին Ասկերանից բարձր, Կարկառ գետի ափին գտնուող Նաջավի-Կուլի աղի տները, իսկ մի քանի օր առաջ՝ Խանին-Բաղի տներն էին վառել. Այսպէս փոխադարձ աւելումը շարունակում էր մերթ բորբոքուելով, մերթ առկայժուելով, բայց երբէք առանց հանգչելու, մինչև որ հասաւ 26-ր:

Այդ օրը, գեկտեմբերի 26-ին, յանկարծ, որտեղից որտեղ՝ Հարազաջի ծայրից բացուեց ֆուրգօնների մի մեծ կարաւանի ծայրը: Ճիշտ է, երկու օր առաջ Աղղամից լուր էր եկել, որ մեծ ապրանք պէտք է գայ Շուշի, բայց հայերը չէին հաւատում. այսօր հաստատում էր: Ասկերանի պահակախումբն իսկոյն ուժեղ դաշտ մօտակայքում գտնուող թռուցիկ երկու խմբով և գարձանն 50 հոգի: Նրանք խրամատում պառկելով և Ասկերանի պատնէշները բռնկելով սպասեցին ֆուրգօնների մօտենալուն, և հենց որ ֆուրգօնները հասան կողակների պահականոցին, ողի մէջ երկու անդամ համազարկ տուին. Ֆուրգօնչիները գլխապատռ դուրս թռչելով ֆուրգօններից՝ փախած դէպի ցած, իսկ ֆուրգօնների մի մասը կարուելով՝ մնաց Հարազաջից ներքև, որտեղից և վերադարձան Աղդամ:

Ամենազարմանալին այն էր, որ եղբ հայերը օգնում կրա-
3.

Կեցին հրացանները, փուրգօններին առաջնորդող 150 թէ էլ աւելի կողակներն իրանց ափիցէրներով, փութկոտութեամբ մի կողմը քաշուեցին, ապա հաւաքուեցին Ասկերանի պատերի տակ առանց մատ-մատի խփելու՝ ապրանքն աղատելու համար: 116 ձի, 54 փուրգօն, մօտ 6000 փութ ամենայն տեսակ ապրանքներով՝ մնացին հայերի ձեռքում, որ մի կամ երկու ժամուայ մէջ անհետացան շրջակայրից վրայ հասած գիւղացիների ձեռքով: Ստրաժնիկներն ու Ասկերանի «պահապան» կողակները ևս իրանց համար մի բաւական բաժին վերցրին՝ հետևեալ օրը հայերի վրայ ծախելու համար: Իսկ փուրգօններին ուղեկցող 150 կողակները մի զարմանալի անտարբերութեամբ հեռացան դէսլքի վայրից:

Դեկտեմբերի 26-ից՝
1906 թ. Յունուարի 4.

Այնուհետև դրութիւնն էլի լարուած մնաց. Վարանգայի զանազան անկիններում ընդհարումներ շարունակ լինում էին. 28-ին աւերուած Աւգալ-Գելաֆլուի թուրքերը գիշերն այգիներում թագ կենալով՝ առաւտում դէմ յարձակուում են Աւգուու գիւղի տաւարածների վրայ և սպանում մի գիւղացու: Համում են խմբերը մօտակայքից, շրջապատում այգիները և թուրքերից սպանում 46 հոգի, որոնց գիակները մնում են տեղն ու տեղը. իսկ թէ փախչողները հետներն էլ տարել էին, յայտնի չէ: 29-ին թեթև ընդհարում եղաւ Շելլուի գլխին, առանց մարդկային կորուստի. 31-ին Ասկերան է գալիս հոչչակաւոր Ֆօն-Ազարովսկին և պահանգի միջոցով սպանում, որ կաւերէ շրջակայքը, եթէ թալանը չվերադարձնեն: Երեք օր անց է կենում խաղաղութեամբ: Յունուարի 4-ին համում է Ֆօն-Ազարովսկու կոչը, ուղարկած Ասկերանցիներին, ապա նոյն օրը գալիս է և ինքն ու ոմբակոծում Խանարադն ու Ասկերանը:

Այդ օրն առաւտեան, նախ քան կողակների Ազգամից դուրս գալը, մի թեթև ընդհարում է տեղի ունենում Լաշին-Ղայի տակ, Շելլուեցիների հետ, Վարանդայի Ասկերանից մէկ և կէս վերստի վրայ. սպանում է Շելլուեցի մի թուրք, իսկ մէկը, փախչել չկարղանալով՝ գերի է ընկնում հայերի ձեռքը: Նրան ցանկանում

են տեղն ու տեղը սպանել, սակայն արգելում են և տանում մօտակայ գիւղերից մէկը՝ հարցաքննութեան:

Յունուարի 5.

Այդ օրը Ասկերանում խաղաղ անցաւ. ոչ մի միջնադէպ չխանգարեց հանգստութիւնը. մինոյն օրը լուր հկաւ, որ թուրքերն ահագին բազմութեամբ պատրաստուում են յարձակում գործելու Նախիջևանիկի, Փիլջամալ և Վարազարոյն գիւղերի վրայ: Լուրն ըստուգելու համար գերուն հարցուփորձի ենթարկեցին: Մի խեղճ ու կրակ թուրք էր, Շելլուեցի: Դժբախտը ցնցումներով գողում էր և մեծ ջանք գործ դրուեց նրան հաւատացնելու, որ ազատ պէտք է թողնուի: Թէյ առաջարկեցին. զօռվ խմեց. ձեռները գողում էին:

Նա, ինչպէս ինքն ասաց, տեղեկութիւն չունէր Ազգամի պատրաստութիւնների մասին. միայն մի առ մի պատմեց, թէ որքան գժբախտացել են թուրք աշխատաւորները, ինչպիսի սոսկալի տուրքեր են առնում թէկերը զինավառելու պատրուակով, բայց զէնքերը չեն բերում, փողերն ուտում են. տուաւ մի քանի թէկերի ու աղաների անուններ, որոնք թիւրք կոռուզներին էին ղեկավարում, իսկ հաշտութեան մասին՝ հետևեալն ասաց.

— Մեր մեծերն ասում են.— կամ պէտք է հայկական գիւղերը մինչև Շուշի աւերենք և Ազգամի ու Շուշուայ արանքում օտար տարր չմնայ, կամ Շուշուայ թբքական մասն ու Մալը-Բէգլուն պէտք է աւերուեն, որ ասենք, թէ՝ Ազգամից վերև հայերինն է, մենք այնտեղ ոչինչ չունինք:

Օգտուելով գէպքից, ինքնապաշտպանութեան ղեկավարները նաևկին փորձերի վրայ մէկն էլ աւելացրին. մի նամակ գրելով, տուին թուրքին, որպէսզի տանէ ու յանձնէ բաւականաչափ մարդաբանէր ի.-բէկին: Ազա գերուն տալով 5 ըուբլի փող, լաւ ուտացնելուց ու խմեցնելուց յետոց, դրին մի զինուորի գաւակի, որպէսզի տանէ ու բաց թողնէ Շելլուի գլխին, որ և պատուէրը կատարեց ճշտութեամբ՝ դեռ մի քիչ էլ ներքե տանելով:

Ահա գրուած նամակի բովանդակութիւնը, որ թուրքերէն չիմանալով՝ գրել էին ուուսերէն:

Մհծապատիւ պարոն
ի.-բէկ Ազգամում.

Այս հայ և թուրք հարկանների մէջ հետդիետէ աւելի է

խորանում ու լայնանում. անձնատուր եղած ամենատեսակ ստորպ պրօվակացիաների՝ խաղաղութեան կամուրջ անց կացնելու փոխարէն, արիւն է՝ որ վիճն է թափում:

Բէկ, ի նկատի ունենալով Զեր լայն հայեացքներն ու ազդեցիկ գիրքը, բարուր ենք համարում այս նամակով աղաչել Զեզ, դուրս գալ իրեկ խաղաղութեան նախանձախնդիր մէկը և պարզել ձերայիններին շէյթանական իշխանութիւնը: Ոչ հայերը թուրքերին կոտորել, ոչնչացնել կարող են, և ոչ էլ թուրքերը՝ հայերին, ոչ կստորուած թուրքերի հողը կը տան հայերին, և ոչ էլ կոտորուած հայերի հողը՝ թուրքերին: Եթէ կան ուրիշ խուլ անհամաձայնութիւններ երկու ազգերի մէջ, արիւնը չէ, որ պիտի հարթէ: Ամեն օր կոր, ամեն օր թալան, ամեն օր սպանուածներ... մինչև երբ. միթէ մենք ստիպուած ենք այս պատմական միծ, նշանաւոր օրերում մեզ համար միայն նախատինք վաստակելու: Ամբողջ Ռուսաստանը մի կուռ բառնցք դարձած՝ հարուածում է բռնակալութիւնը, բնուրոկրատիային, իսկ մենք գործիք դարձած բռնակալութեանը՝ հնարաւոր ենք դարձնում նրա գոյութեան երկարաւառութիւնը:

Հաւատացած եղէք, Բէկ, հայերը խաղաղութիւնից բացի, ուրիշ բան չեն ուզում. մի լսէք պրօվակատօրներին: Նրանք հանգստութեան մասին չեն մտածում: Կառավարութեան ձեռք առած միջոցները դրական ոչ մի հետևանք չունեցաւ, մինչդեռ բացասականը—մատներով չպէտք է հաշուել: Ի՞նչ է ցոյց տալիս այդ, այն որ ժողովուրդներն իրանք պէտք է հաշտուեն, որովհետեւ ուրիշ հաշտեցնողները կուռեցնում են միայն:

Նամակը երկար էր գրուած, վերջումն էլ աւելացրած էր, որ բէկը նեղութիւն քաշէ այդ նամակը կարդալու Ս.-բէկի, Զ.-բէկի և մօլլաների մօտ, ու զրդէ նրանց, որ խօսեն ժողովը դին հանգիստ մնալու մասին:

Նամակն ուղարկելու հետևեալ օրն էր, որ թբքական վեցհազարանոց բանակը արշաւեց դէպի Վարազպարոյն, որով ապացուցեց թէ իզուր են բոլոր մասնաւոր ցանկութիւնները, մինչեւ որ հայ և թուրք ժողովուրդներն իրանք ձեռք չմեկնեն հաշտութեան:

Դրութիւնն այդպէս շարունակուել չէր կարող. Շուշուայթուրքերը եթարկուած էին բացարձակ սովիթ. հեռագիր հնուագրի յետեկից թոշում էին Բագու և Թիֆլիս՝ իրանց մի ճար անելու, առվից ազատեկու. սկսուեց հեռագրերի մի շարք, ուղղուած փոխարքային և այլ կարող անձանց՝ Ասկերանը բաց անելու համար: Բագուի թուրքերն էլ առանձին աղերսագրեր ու պահանջագիր ուղարկեցին և վերջապէս՝ Ասկերանը բացուեց թնդանօթներով ու Շուշուայ գիւղերը ոմքակոծելով: Ֆուրգօներն սկսեցին սկզբում վախենալով, ապա ազատորէն երթեեկել եւլախից Շուշի, իսկ Եւլախից մինչև Աղգամ ճանապարհը գեռ փակ էր ու փակ հայերի համար, և, իբրև պատիժ, հայերի ապրանքները՝ եթէ պատահում էր, բերում էին Շուշի փութին ստանալով 60 կոպէկ, իսկ թուրքերից 30. ամեն տեսակ կենսական մթերքներ տարան թուրքերի համար, քաղաքը լըցրին, իսկ հայկական մասը շատ քիչ բան էր գնում. այդ պատճառով շատ անհրաժեշտ մթերքներ այդ օրուանից թուրքերի մօտ աւելի էժան էր լինում, բան թէ հայերի:

Այդպէս Ասկերանը բաց մնաց, բայց ոչ ընդմիջտ. ամպերը նորից հաւաքուեցին, հայ-թբքական ընդհարումները նորից ըոր բորբուցին շրջակայցում և կիրճը նորից փակուեց մի քանի ամիս փակ մնալուց յետոյ:

Այս է Ասկերանում տեղի ունեցած դէպքերի խիստ համառու պատմութիւնը: Ժամանակի գրութիւնը թոյլ չի տալիս ամբողջի իսկական պատկերը տալու, որից պարզ կարելի է տեսնել, թէ հայերը որքան մեղաւոր էին Ասկերանը փակելում, թէ արտաքին ճարպիկ ձեռքեր ինչպէս էին նպաստում դրութիւնը միշտ լարուած պահելու Ասկերանում, դաւաներում և թբքական գիւղերում:

Որովհետեւ այս պատմութիւնը միմիայն Ասկերանի շուրջը կատարուած դէպքերի նկարագրութիւնն է, ուստի կարող է աշբ ընկնել այն հանգամանքը, որ հայերն Ասկերանից չէին հեռանում մինչև անգամ այն ժամանակ, երբ Ղարադաջում, Շելլուի գլխին կամ Խրամորթի տակ օրերով, սոյն իսկ մի երկու շաբաթով թուրք խմբեր չէին երկում: Բայց մի թեթև ակնարկ աւելի հեռուն, և կերպայ, որ Ասկերանի փակումն ու նրա շարունակ պահպանու-

թեան տակ երկար պահելը լոկ հետևանք է եղել գաւառների այս
կամ այն ծայրերից եկող արձագանքների. օր չէր անցնում, որ
Աւդալ-Գելաֆլուի տակ, կամ Ղզղալի-Բուռռնում, կամ Վէյսալ-
լուի մօտ, կամ Ամարասի ձորում, կամ Ղաջարի կողմերում որ և
է մի ընդհարում չինէր կամ մասնակի, կամ մասսայական. մա-
սաւանդ շարունակ համնող լուրերը, թէ թուրքերն այս ինչ կող-
մում ահազին պատրաստութիւններ են տեսնում յարձակում գոր-
ծելու համար, միշտ լարուած դրութեան մէջ էին պահում հայերին
և Ասկերանի պահպանութիւնը խստացնում էին, որովհետեւ ամե-
նահասարակ ուազմագետը, կամ հէնց տեղին ծանօթ որ և է
ոչուազմագէտն անզամ՝ կարող էր հասկանալ, թէ Ասկերանն է
այն յաղթ դուռը, որի յաջող պահելուց է կախուած գրեթէ Ղա-
րաբաղի բոլոր մասերի վիճակը:

1. Հայի.—Հարուստ, և աղքատ.
Ա տողագրութիւն 15 կող.
2. Պետէխօնիվ.—Հաց, ըստ և առ-
դամութիւն 12 >
3. Ֆէշորովիչ—Խնչպէս են ժո-
ղով, և ծախս. ժող փող. 5 >
4. Կառնելիսկ.—Կոր լեր, քար. 2 >
5. Չեն նով.—Գիրզ, և բանորը 15 >
6. Թերենտոսօֆեր.—Աղջ, հարցը
և սոց.-գեղօվկատիան 5 >
7. Պրանգովինի.—Գիրզացիներ. 5 >
8. Ա. Թովիշեան.—Արշեստ, մի-
ոթիւններ 15 >
9. Եօվօրօնդակի.—Խնչ է իրաւա-
կան պետութիւնը 15 >
10. Ա. Կարսնավ.—Հող. հարցը
նոր-Զելիսանդրայում 2 >
11. Ժան Ժօռէս.—Բորժ. սեփ, և
նրա ապագայ գրաւումը 5 >
12. Ա. Արենիսնի.—Դեմեկ, ընտ. 12 >
13. Կառ ցիլի.—Աղոտթիւնների
հարցը Թուստաննում 3 >
14. Ա. Անարնենին (Արիիր) —
Աղատութեան ճանապար. 80 >
15. Ֆ. Լասար.—Սահ. էութ. մաս. 5 >
16. Ա. Ն. Խնչպէս կարելի է լու-
ծել հողալին հարցը 12 >
17. Վ. Գալութիվ.—Խնչ է ժող. 2 >
18. Ա. Զաւարեան.—Վիճակազր.
աեղ. գիւղ ազգաբնակ. 25 >
19. Ալժենս Գիլնան—Ժողով. օ-
րէնս. զաշ Զւիցերիայում 20 >
20. Դիկտէյն.—Ով ինչ է ապր. 7 >
21. —Մի զրոյց հողի մասին 5 >
22. Լ. Շիշկո.—Աղջ, ծր հարցը 7 >
23. Ա. Նիկոլայէտ.—Կօօպերացիան 2 >
24. Շուազ. օդու. ձեր իրաւունք. 1 >
25. Լ. Պետով.—Երկու ծրագիր 20 >
26. Ա. Վ. Հուկով.—Կոտ, կազմա-
կերպ. Հիմքերը Արեմուս. 12 >
27. Անսիիյ.—Գիւղաց. հարցը
Յրանսախյում 7 >
28. Ա. Յովինենիսեան.—Գաշն.
և նրա հակառակորդները 50 >
29. Ժ. Գէդ. եւ պ. Լամարկ.—
30. Նօվօրօնդակի.—Աղջ. հարցը,
Յատօնօմիա և Գէղէրացիա 7 >
31. Խորամանկ կարգեր 7 >
32. Մ. Յովինենիսեան.—Գորզ.
հանգուցը (առանձիան, ինդիրը
մւրջ. շրջ.). 20 >
33. Հրանդնոներ գաւառ. համար
34. Վ. Զերնով.—Գասակարդա-
լին կոյի թէօրիալէ շուրջը 10 >
35. Լ. Շիշկո.—Նւազագոյն ծր-
բազիրը 12 >
36. Ա. Ենկրասով.—Խնչ կարգեր
Են հարկաւոր ժողովրդին 10 >
37. Ա. Ճամար.—Ֆէղէրալիզմ
գէմոլիրատիզմ 30 >
38. Արտավային.—Վնասակարը 4 >
39. Արտավային.—Մի քանի գլուխ
հայ-թրքական ընդհար. 25 >
40. Մ. Յովինենիսեան.—Կովկ.
Վանդ. (Հայ-թրք. ընդհ.) 25 >
41. Ե. Գորցեւ.—Խնչպէս իրական.
ազգութիւն, հասաւ. 7 >
42. Գ. Խաճակ.—Վէպի Գէղէր. 80 >
43. Վ. Զերնով.—Պրոլետար, և
աշխատաւոր դիւզացիու-
թիմը 18 >
44. Արյանօվա.—Գիրզացին և
բանուրը 3 >
45. Հ. Վանդերիվելիդ.—Բանւոր զա-
սակարգ. գլութ. Բեղիայում 45 >
46. Ա. Զակ.—Հող և կապիտ. 15 >
47. Վանէ.—Անշատուածները 10 >
48. Մ. Յովինենիսեան.—Փիլիսո-
փայ Սօցիոլոգ 15 >
49. Ֆէօրօնիվիչ. Ժողովրդ. Փողերը
(բուրժէրէն) 7 >
50. Արաւային. Մի քանի գլուխ
հայ-թրքական ընդհարում. 1 >
51. Արաւային. Մի քանի գլուխ
հանգուցը Յովինենիսեան. 20 >
52. Յ. Թաղէտսեան. Քրանսիո-
կան մեծ լեզափոխ. 20 >
53. Գերունի Յիշուրութիւն, մօտ.
անցեալից Լ պրակ 10 >

Դիմել՝ Բագու «Պատրոդնիկին»
Երևան. — Ա. Օհանջանեանին.

Թիֆլիս Նիկ. Մատինեանին «Փարոս».

Ցանկացողները կարող են ստանալ գրագորանի բոլոր գրքերը
միասին, չըվճարելով ճանապարհածախսը:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431264

